Funded by the European Union

ԲՅՈՒՋԵԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ

Հանրամատչելի ուղեցույց ՔՀԿ-ների համար

ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԲՅՈՒՋԵԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ

Սույն ուղեցույցը մշակվել է Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոնի (EDRC) կողմից «Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագրի շրջանակներում: Ծրագիրն իրականացվում է Եվրոպական միության ֆինանսավորմամբ՝ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի և «Ագորա Սենթրլ Յուրոպ» ՀԿ-ի (Չեխիա) հետ համագործակցաբար:

ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԽՈՒՄԲ՝

Կարինե ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Լիլիթ ՀԱԿՈԲՅԱՆ

Այս հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ:

Բովանդակության համար պատասխանատվություն է կրում Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոնը և պարտադիր չէ, որ արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

Հրապարակումից օգտվելիս պատշաճ հղումը պարտադիր է:

© ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ, 2023

«Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագիրն իրականացվում է Իրավաբանների հայկական ասոցիացիայի, Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոնի և Ագորա Սենթրլ Յուրոփ կազմակերպությունների համագործակցությամբ, Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ:

Ծրագրի նպատակն է նպաստել պետական բյուջետային գործընթացներին քաղաքացիական հասարակության մասնակցության ընդլայնմանը, խթանել Հայաստանում ներառական և թափանցիկ բյուջետային գործընթացները:

Ծրագրի շրջանակներում Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոնն իրականացնում է ՔՀԿ-ների և երիտասարդ մասնագետների բուջետային գործընթացին մասնակցելու կարողությունների բարձրացման, բյուջետային գործընթացների վերաբերյալ քաղաքացիական հասարակության տեղեկացվածության մակարդակի բարելավման, բյուջետային քաղաքականությունների մշակման և իրականացման գործընթացներին ՔՀԿ-ների արդյունավետ մասնակցության աջակցության միջոցառումներ, այդ թվում՝ բյուջետային տեղեկատվության պարզեցումներ, բյուջետային ուղեցույցների մշակում և այլն:

Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոնը (EDRC) հանրային ծրագրերի և քաղաքականությունների մոնիտորինգին և վերլուծությանն ուղղված ոչ առևտրային նախաձեռնություն է: 2001 թվականից ի վեր Կենտրոնն իրականացրել է մի շարք ծրագրեր, որոնցում բավականին մեծ դեր են ստացել առանձին ոլորտների քաղաքականությունների, ծրագրերի և բյուջեների վերլուծությունները: Կարևորելով հանրային միջոցներով հանրության համար իրականացվող ծրագրերի նպատակայնությունը, հասցեականությունը, իրականացման արդյունավետությունը և հանրության գոհունակությունը՝ Կենտրոնը փորձում է պրոֆեսիոնալ ներդրում ունենալ քաղաքականությունների մշակման և քննարկման գործընթացներում:

Սույն հրապարակումը համառոտ ներկայացնում է բյուջետային տեղեկատվության վերլուծության և մշտադիտարկման հիմնական մեթոդները և գործիքակազմը: Այն ուղղված է հանրության լայն շրջանակին՝ նպատակ ունենալով բարձրացնել բյուջետային գրագիտության մակարդակը, հիմքեր ստեղծել հասարակության կողմից բյուջեների վերլուծության և արդյունավետ երկխոսության համար:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱԱՀ	Ավելացված արժեքի հարկ
ԱԺ	Ազգային ժողով
ԱՄՀ	Արժույթի միջազգային հիմնադրամ
ԱՆ	Առողջապահության նախարարություն
ԱՍՀՆ	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
ԲԳԿ	Բյուջեի գլխավոր կարգադրիչ
ԵՄ	Եվրոպական միություն
ԿԳՄՍՆ	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ՀԲ	Համաշխարհային բանկ
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
ՄԳ	Մոնիտորինգ և գնահատում
ՍԶ	Սպառողական զամբյուղ
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
ՄԺԾԾ	Միջնաժամկետ ծախսերի ծրագիր
մլն	միլիոն
մլրդ	միլիարդ
ՊՄ	պետական մարմին
ՍԳԻ	Սպառողական գների ինդեքս
ՎԿ	Վիճակագրական կոմիտե
ՏԶՀԿ	Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն
ՏԿԵՆ	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
ՔՀԿ	Քաղաքացիական հասարակության կառույցներ
ՖՆ	Ֆինանսների նախարարություն

ՈՒՂԵՑՈՒՅՑԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Էջ
ՆԱԽԱԲԱՆ	6
ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ՀՀ-ՈՒՄ • Ի՞նչ է բյուջետային գործընթացը • Ե՞րբ է բյուջետային գործընթացը սկսվում և ավարտվում • Ո՞րն է բյուջետային գործընթացը կարգավորող օրենսդրական շրջանակը • Որո՞նք են է բյուջետային գործընթացի հիմնական փուլերը • Որո՞նք են է բյուջետային գործընթացի հիմնական փուլերը • Բյուջեի մշակման ժամանակացույցը • Որո՞նք են բյուջետային հիմնական փաստաթղթերը. բյուջետային պլաններ • Որո՞նք են բյուջետային հիմնական փաստաթղթերը. բյուջեի կատարում • Բյուջետային տեղեկատվության ի՞նչ աղբյուրներից օգտվել	7
ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ	17
ԲՅՈՒՋԵԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ • Ինչպե՞ս վերլուծել բյուջետային տեղեկատվությունը • Ֆինանսավորման ծավալների և միտումների վերլուծություն • Գերակայությունների վերլուծություն • Շահառուների վերլուծություն: Մեկ շահառուի հաշվով ծախսեր • Ծախսերի ճշգրտում ըստ գնաճի • Արդյունավետության վերլուծություն • Պետական բյուջեի ամփոփ վերլուծություն • Բյուջեի եկամուտների վերլուծություն • Բյուջեի դեֆիցիտի վերլուծություն • Բյուջեի ծախսերի վերլուծություն • Ինչպե՞ս վերլուծել գործառական ծախսերը • Ինչպե՞ս վերլուծել տնտեսագիտական ծախսերը • Ինչպե՞ս վերլուծել ծրագրային ծախսերը	18
ԲՅՈՒՋԵԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ	41

ՆԱԽԱԲԱՆ

Բյուջետային տեղեկատվությունը կարդալու և մատչելի ներկայացնելու հմտությունները կարևոր են բյուջետային գործընթացներին Քաղաքացիական հասարակության կառույցներ (ՔՀԿ-ներ) արդյունավետ մասնակցությունը խթանելու, պետական մարմինների հաշվետվողականությունը և թափանցիկությունը բարելավելու տեսանկյունից:

Բյուջետային փաստաթղթերը, սովորաբար, պարունակում են մեծ քանակությամբ թվային և տեխնիկական տեղեկատվություն, մասնագիտական տերմիններ, որն ընթերցողին ոչ միշտ է հասկանալի: ՔՀԿ-ները պետք է պատկերացում ունենան և կարողանան վերլուծել բյուջետային փաստաթղթերը և ներկայացվող տեղեկատվությունը, հասկանան բյուջետային ռեսուրսների ծախսման ուղղությունները և ծավալները, հետևեն և մշտադիտարկման ենթարկեն բյուջետային ծրագրերի իրականացումը և ազդեցություններն իրենց շահառու խմբերի վրա, ինչը հնարավորություն կտա մեծացնել հասարակության մասնակցությունը բյուջետային գործընթացներում և կառավարությանը պահել հաշվետու: Այս իմաստով Ծրագիրը կարևորում է ՔՀԿ-ների մոտ բյուջետային տեղեկատվության օգտագործման, վերլուծության անհրաժեշտ գործիքակազմին տիրապետման մակարդակի և կիրառման հմտությունների զարգացումը:

Սույն ուղեցույցը նպատակ ունի օժանդակել, մասնավորապես, ՔՀԿ-ներին և, ընդհանուր առմամբ, լայն հասարակությանը՝ նրանց տալով անհրաժեշտ գիտելիք և գործիքակազմ բյուջետային վերլուծություններ և բյուջետային ծրագրերի մշտադիտարկում իրականացնելու համար:

Ուղեցույցը հանդիսանում է խորհրդատվական բնույթի ցուցումներ և ներկայացնում է ՀՀ բյուջետային գործընթացը և փուլերը, գործընթացի ժամանակացույցը, բյուջետային հիմնական փաստաթղթերը և տեղեկատվության հիմնական աղբյուրները, բյուջետային վերլուծությունների հիմնական ուղղությունները և դրանց իրականացման մեթոդներն ու գործիքները, ներկայացնում է բյուջետային ծրագրերի և ծախսերի վերահսկման և մշտադիտարկման կիրառական գործիքների շրջանակը:

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ՀՀ-ՈՒՄ

Ի՞նչ է բյուջետային գործընթացը

- Յուրքանչյուր բյուջետային տարվա բյուջեները կազմելու, քննարկելու, հաստատելու և կատարելու, դրանց տարեկան հաշվետվությունը հաստատելու ուղղությամբ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների՝ օրենքով կանոնակարգված գործունեությունն է:

Ե՞րբ է բյուջետային գործընթացը սկսվում և ավարտվում

- ՀՀ-ում բյուջետային տարին սկսվում է յուրաքանչյուր տարվա **հունվարի 1-ից** և ավարտվում նույն տարվա **դեկտեմբերի 31-ին**:
- Տվյալ բյուջետային տարվա համար բյուջետային գործընթացը սկսվում է «ՀՀ վարչապետի՝ առաջիկա տարվա բյուջետային գործընթացը սկսելու մասին որոշման» ընդունման օրը և ավարտվում՝ տվյալ բյուջետային տարվա բյուջեների կատարման վերաբերյալ հաշվետվությունը հաստատելու օրը («ՀՀ բյուջետային համակարգի մասին» օրենքի 21-րդ հոդված, 1-ին մաս):

Ո՞րն է բյուջետային գործընթացը կարգավորող օրենսդրական շրջանակը

- ՀՀ-ում բյուջետային գործընթացը կարգավորվում է հետևյալ օրենսդրական ակտերով.
  - ✓ ՀՀ Սահմանադրություն,
  - ✓ ՀՀ բյուջետային համակարգի մասին օրենք,
  - ✓ ՀՀ պետական բյուջեի մասին օրենք,
  - ✓ ՀՀ տեղական ինքնակառավարման մասին օրենք,
  - ✓ ՀՀ կառավարության և վարչապետի որոշումներ:

Դատակեր 1. Բյուջետային գործընթաց



Որո՞նք են է բյուջետային գործընթացի հիմնական փուլերը

- **Բյուջեի ձևավորում** - Հստակեցվում են իրականացվելիք պետական ծրագրերը, միջոցառումները, բյուջետային քաղաքականության նպատակները և բյուջետային ծրագրերի ակնկալվող արդյունքները: Կառավարության կողմից մշակվում է Միջնաժամկետ ծախսերի ծրագիրը (ՄԺԾԾ) և բյուջեի նախագիծը:

Պատկեր 2. Բյուջետային գործընթացի փուլերը և ընթացիկ փաստաթղթերը



- **Բյուջեի հաստատում** – Ազգային ժողովը, քննարկում, փոփոխում և հաստատում է բյուջեի մասին օրենքը:
- **Բյուջեի կատարում** – կառավարությունն իրականացնում է բյուջեի մասին օրենքով հաստատված քաղաքականությունները: Ապահովում է բյուջետային ծրագրերի միջոցառումների իրականացում, սահմանված ուղղակի արդյուքների ձեռքբերում և հսկողություն:
- **Բյուջեի աուդիտ և գնահատում** – Կառավարությունը թողարկում է բյուջեի կատարման հաշվետվություններ, իրականացվում են ծրագրերի գնահատումներ, Հաշվեքննիչ պալատը եզրակացություն է տալիս բյուջեի կատարման համապատասխանության վերաբերյալ, ԱԺ-ն քննարկում և հաստատում է բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը:

Ի՞նչ ժամանակացույցով է ընթանում բյուջետային գործընթացը

- Ժամանակագրական յուրաքանչյուր տարվա ընթացքում միաժամանակ իրականացվում են բյուջետային տարբեր գործառույթներ, որոնց մի մասը հանդիսանում է նախորդ տարվա բյուջետային գործընթացի մաս, մյուսները՝ ընթացիկ կամ հաջորդող տարվա: Այսպես, յուրաքանչյուր տարվա ընթացքում զուգահեռ իրականացվում են նախորդ տարվա բյուջեի կատարման վերլուծություն և տարեկան հաշվետվության մշակում, ընթացիկ տարվա բյուջետային ծրագրերի իրականացում/կատարում և առաջիկա տարվա բյուջեի մշակման/ձևավորման աշխատանքներ: Մասնավորապես՝
  - Յուրաքանչյուր տարվա առաջին կիսամյակում պատրաստվում և հաստատվում է նախորդ տարվա բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը,
  - Ամբողջ տարվա ընթացքում իրականացվում են տվյալ տարվա բյուջետային ծրագրերը, այսինքն՝ կատարվում է ընթացիկ տարվա բյուջեն,
  - Տարվա սկզբից մինչև տարեվերջ ձևավորվում և հաստատվում է հաջորդ տարվա բյուջեն:
- Բյուջետային գործընթացն իրականացվում է համաձայն ՀՀ վարչապետի կողմից առաջիկա տարվա բյուջետային գործընթացը սկսելու մասին որոշման ժամանակացույցի[1]: Տարեկան բյուջեի, ինչպես նաև առաջիկա 3 տարիների ֆինանսական պլանը արտացոլող Միջնաժամկետ ծախսերի ծրագրի (ՄԺԾԾ) մշակման ու հաստատման գործընթացներն ընթանում են զուգահեռ, մեկ միասնական ժամանակացույցով (Պատկեր 3):

Պատկեր 3. Բյուջետային օրացույց



[1] https://www.e-gov.am/decrees/item/25721/

Բյուջեի մշակման ժամանակացույցը

- Ստորև պատկերը ներկայացնում է 2024-2026 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրի և 2024 թվականի պետական բյուջեի մշակման ժամանակացույցը:

Պատկեր 4. 2024-2026թթ. ՄԺԾԾ և 2024 թվականի պետական բյուջեի մշակման ժամանակացույցը[2]



[2] «ՀՀ 2024 թվականի բյուջետային գործընթացը սկսելու մասին» ՀՀ վարչապետի N 86-Ա որոշում՝ https://www.e-gov.am/decrees/item/25721/:

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՔՀԿ-ՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- ՔՀԿ-ները իրենց բյուջետային նախաձեռնությունները և առաջարկները պետական մարմիններին ազատ են ներկայացնել ողջ բյուջետային տարվա ընթացքում, սակայն բյուջետային գործընթացի յուրաքանչյուր փուլում ՔՀԿ-ների արդյունավետ մասնակցության գործիքները տարբեր են:
- **Բյուջեի ձևավորում և հաստատում.** նկատենք, որ առաջիկա տարվա բյուջեի ձևավորման գործընթացին մասնակցությունը ցանկալի է մեկնարկել **բյուջեի ձևավորման** վաղ փուլում, երբ դեռ պետական մարմինների կողմից մշակվում են ոլորտային ծրագրերի բյուջետային հայտերը և դեռևս չեն ներկայացվել Ֆինանսների նախարարություն: Սա ամենից արդյունավետ հնարավորությունն է ուղղակիորեն մասնակցելու, իրենց մտահոգությունները, առաջարկությունները նաև նախաձեռնությունները ներկայացնելու ոլորտային քաղաքականություն իրականացնող պետական մարմիններին:



- **Բյուջեի կատարում.** այս փուլում ՔՀԿ-ները կարող են վերահսկել բյուջեի իրականացումը՝ նախաձեռնելով բյուջետային ծախսերի մշտադիտարկում, ինչպես նաև՝ դառնալ բյուջետային միջոցառումների իրականացնողը՝ մասնակցելով պետական մարմինների կողմից ծառայությունների գնման նպատակով կազմակերպվող մրցույթներին:
- **Բյուջեի աուդիտ և գնահատում.** բյուջետային ծրագրերի անկախ և մասնագիտական գնահատումներ նախաձեռնելով ՔՀԿ-ները կարող են հասնել ոլորտային քաղաքականությունների և ծրագրերի վերանայումների: Գնահատումների շրջանակը ընդգրկուն է, կարող է վերաբերել բյուջետային ծրագրերի համապատասխանության, արդյունավետության, շահառուների վրա ազդեցությունների, նաև արդյունքների գնահատումներին:

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Որո՞նք են բյուջետային հիմնական փաստաթղթերը. բյուջետային պլաններ

Միջնաժամկետ ծախսերի ծրագիր	• ***Փաստաթուղթն արտացոլում է պետական ծախսերի եռամյա պլանը՝ միջնաժամկետ հարկաբյուջետային նպատակներին և քաղաքականության գերակայություններին համապատասխան:*** • ***Հաստատվում է ՀՀ կառավարության պարտքի բեռի նվազեցման ծրագրի հետ մեկտեղ:*** ***Մշակվում է ՀՀ ՖՆ կողմից՝ պետական մյուս գերատեսչությունների մասնակցությամբ:*** ***Հաստատվում է ՀՀ կառավարության որոշմամբ:*** ***https://minfin.am/hy/page/petakan_mijnazhamket_tsakhseri_tsragre/***
Բյուջետային ուղերձ	• *Ներկայացնում է սոցիալ-տնտեսական զարգացման և հարկաբյուջետային քաղաքականությունների հիմնական ուղղությունները և կանխատեսումները, որոնք ընկած են պետական բյուջեի մշակման հիմքում:* *Կազմվում է ՀՀ կառավարության կողմից՝ ՀՀ ՖՆ և մյուս գերատեսչությունների օժանդակությամբ:* *https://minfin.am/hy/page/petakan_byuj/*
Բյուջեի ոլորտային հայտեր	• *Կազմվում է յուրաքանչյուր ոլորտի/բնագավառի պատասխանատու պետական գերատեսչության կողմից: Հայտերը ներկայացվում են ՀՀ ՖՆ և հրապարակվում են կազմող մարմնի կայքէջում:*
Բյուջեի մասին օրենք	• *Պետական բյուջեն ամփոփող և ներկայացնող վերջնական փաստաթուղթ է, որը բխում է Բյուջետային ուղերձից:* *Կազմվում է ՀՀ կառավարության կողմից՝ ՀՀ ՖՆ և մյուս գերատեսչությունների օժանդակությամբ:* *Ընդունվում է ԱԺ կողմից:* *https://minfin.am/hy/page/petakan_byuj/*
Քաղաքացու բյուջե	• *Տարեկան պլանային բյուջեի հասարակության տեսանկյունից կարևոր տեղեկատվության և պետական ծախսերի հիմնական ուղղությունների պարզ և ամփոփ նկարագրությունն է:* *Մշակվում է ՀՀ ՖՆ կողմից՝ պետական մյուս գերատեսչությունների մասնակցությամբ:* *https://minfin.am/hy/page/2018_2019*

Որո՞նք են բյուջետային հիմնական փաստաթղթերը. բյուջեի կատարում

Բյուջեի կատարման հաշվետվություններ	• ***Կատարման հաշվետվությունները մշակվում և հրապարակվում են ամսական, եռամսյակային, կիսամյակային և տարեկան կտրվածքով: Ներկայացնում են բյուջետային հիմնական տեղեկատվության պլանային, ճշտված և փաստացի մակարդակները՝ ըստ համապատասխան ժամանակահատվածի:*** ***Մշակվում է ՀՀ ՖՆ կողմից:*** ***https://minfin.am/hy/page/petakan_byujei_hashvetvutyun/***
Պետական բյուջեի կատարման վերաբերյալ ՀՀ հաշվեքննիչ պալատի եզրակացություն	• *ՀՀ պետական բյուջեի միջոցների օգտագործման, ֆինանսական փաստաթղթերի վարման պահանջների կատարման և դրա արդյունքում ձևավորված հաշվետվությունների արժանահավատության վերաբերյալ եզրակացություն:* *Մշակվում է ՀՀ հաշվեքննիչ պալատի կողմից:* *http://armsai.am/hy/budget-conclusions*
Բյուջեի պարզեցված հաշվետվություն	• *Տարեկան կատարված բյուջեի հիմնական ցուցանիշների ամփոփ ներկայացումն է:* *Մշակվում է ՀՀ ՖՆ կողմից:* *https://minfin.am/hy/page/hh_petakan_byujei_parzecvats_hashvetvutyun*

Բյուջետային տեղեկատվության ի՞նչ աղբյուրներից օգտվել

- Բյուջետային տեղեկատվության հիմնական աղբյուրը բյուջետային գործընթացի կառավարման լիազոր մարմնի՝ **ՀՀ ֆինանսների նախարարության (ՖՆ),** կայքէջն է (www.minfin.am):
- Բյուջեի **պլանային ցուցանիշները** կարելի է գտնել ՀՀ ՖՆ կայքի «ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ» ենթաբաժնում իսկ բյուջեի կատարման ցուցանիշները՝ «ԳԱՆՁԱՊԵՏԱՐԱՆ» ենթաբաժնում:
- Ե՛վ պլանային, և՛ փաստացի ցուցանիշները ՀՀ ՖՆ կայքում հասանելի են եռամսյակային, կիսամյակային և տարեկան կտրվածքներով՝ համապատասխան բյուջետային փաստաթղթերի հավելվածների: Դրանք կարող եք գտնել պատկեր 6-ում ներկայացված քայլերի հաջորդականությամբ:
- Բյուջեի կատարման ցուցանիշները հասանելի են նաև ՀՀ Վիճակագրության կոմիտեի կայքէջում (www.armstat.am)՝ **«ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը»** ամսական և **«Հայաստանի ֆինանսների վիճակագրություն»** տարեկան հրապարակումներում:

Պատկեր 5. Բյուջետային տեղեկատվության ներկայացումը ՀՀ ՖՆ կայքէջում



Պատկեր 6. ՀՀ ՖՆ կայքէջում բյուջետային տեղեկատվությունը գտնելու քայլերը

- Յուրաքանչյուր պետական գերատեսչության բյուջետային հայտին ծանոթանալու համար անհրաժեշտ է այցելել տվյալ **պետական մարմնի կայքէջը:** Առանձին պետական գերատեսչությունների հայտերին ծանոթանալը հատկապես կարևոր է բյուջեի պլանավորման և կազմման գործընթացին իրազեկ մասնակից դառնալու տեսանկյունից:
- Բյուջետային տեղեկատվությունը հանրությանը հասանելի է նաև պարզեցված ձևաչափով՝ **ՀՀ քաղաքացու բյուջեի**, **Բյուջեի պարզեցված հաշվետվության** և **Ինտերակտիվ բյուջեի** տեսքով:
- **ՀՀ քաղաքացու բյուջեում** ներկայացվում է բյուջեի պլանային ցուցանիշները, իսկ **Բյուջեի պարզեցված հաշվետվությունում՝** բյուջեի կատարման արդյունքները: Այս երկու փաստաթղթերն էլ հասանելի են

ՀՀ ՖՆ կայքէջում՝ «Քաղաքացու բյուջե» ենթաբաժնում[3]:

- **Ինտերակտիվ բյուջեն** հնարավորություն է տալիս տեղեկանալ ուսումնասիրվող ժամանակահատվածում բյուջետային ծախսերի, եկամուտների և դեֆիցիտի փաստացի և պլանային ցուցանիշների մասին: Ընտրելով տվյալներն ըստ բյուջետային դասակարգումների՝ գործառական, գերատեսչական և տնտեսագիտական, հնարավոր է աղյուսակի տեսքով արտապատկերել բյուջետային տեղեկատվությունը և ներբեռնել Excel տարբերակով: Այս ֆորմատով ինտերակտիվ բյուջեն հասանելի է ՀՀ ֆինանսների նախարարության կայքէջում[4]:
- Ինտրակտիվ բյուջեի քարտեզը վիզուալացված, գրաֆիկական տարբերակով կարելի է գտնել ՀՀ էկեկտրոնային կառավարման կայքէջում[5]: Այն հնարավորություն է տալիս տեսնել գործառական դասակարգմամբ յուրաքանչյուր ոլորտի՝ տվյալ տարվա պլանային ծախսերը և վերջինիս կառուցվածքում ծախսված ռեսուրսների մասնաբաժինը: Գրաֆիկական ներկայացումը թեև գործառական դասակարգմամբ է, սակայն քարտեզը հնարավորություն է տալիս տեղափոխվել բյուջետային կատեգորիաներով և վերջին մակարդակում տեսնել բյուջետային միջոցառման գերատեսչական դասակարգումը՝ միջոցառումն իրականացնող բոլոր մարմիններին, և տնտեսագիտական դասակարգումը՝ միջոցառման ֆինանսավորման բնույթը (տե՛ս պատկեր 7):
- Պետական բյուջեի վերաբերյալ տեղեկատվությունը հնարավոր է հավաքագրել նաև **միջազգային աղբյուրներից**: Հատկապես, երբ իրականացվող հետազոտությունը վերաբերում է պետական մակարդակով բյուջեին և ներառում է համադրումներ այլ երկրների հետ, նպատակահարմար է օգտվել միջազգային տարբեր կառույցների՝ Համաշխարհային բանկ, Արժույթի միջազգային հիմնադրամ, Ասիական զարգացման բանկ, բյուջեին առնչվող հաշվետվություններից կամ տվյալների շտեմարաններից: Սովորաբար այս կառույցների էջերում տեղեկատվությունը ներկայացվում է ըստ երկրների և ըստ ցուցանիշների: Այսինքն, երբ անհրաժեշտ է որևէ երկրի բյուջետային վիճակագրություն, ապա պետք է այցելել այդ երկրին վերաբերող առանձին կայքէջը, իսկ երբ անհրաժեշտ է համեմատական վերլուծություններ իրականացնել տարբեր երկրների միջև, ապա պետք է ընտրել կոնկրետ ցուցանիշը/ները և համեմատվող երկրները:

[3] https://minfin.am/hy/page/qaghaqacu_byuje_1

[4] http://budget.minfin.am:82/

[5] https://www.e-gov.am/interactive-budget/

Պատկեր 7. ՀՀ ինտերակտիվ բյուջեի գրաֆիկական ներկայացումը



Գործառական (Բաժին)



Գործառական (Խումբ)



Գործառական (Դաս)



Միջոցառում



Գերատեսչական



Տնտեսագիտական

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

- Պետական բյուջեն պետական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ դրամական միջոցների ձևավորման և ծախսման ֆինանսական ծրագիրն է: Այն ցույց է տալիս, թե կառավարությունը, օգտագործելով հասարակական ռեսուրսները, ինչպես է ծրագրում իրագործել իր քաղաքական նպատակները և ինչպիսի հասարակական ծառայություններ է մատուցում բնակչությանը:
- Պետական բյուջեի բաղկացուցիչ մասերն են բյուջետային **եկամուտները և բյուջետային ծախսերը**:
- Երբ բյուջետային եկամուտները և ծախսերը հավասար են, ապա ասում ենք, որ բյուջեն հավասարակշռված է: Հակառակ դեպքում՝ բյուջետային եկամուտների և ծախսերի տարբերությունը կազմում է **բյուջեի հավելուրդը** (եկամուտների գերազանցման դեպքում) **կամ պակասուրդը** (ծախսերի գերազանցման դեպքում):
- Երբ հավաքագրված բյուջետային եկամուտները կառավարությանը հնարավորություն չեն տալիս իրականացնել պլանավորած ծրագրերը, կառավարությունը որոշում է ներքին կամ արտաքին աղբյուրներից ներգրավել փոխառություններ: Այսինքն, կառավարությունը ներքին կամ արտաքին աղբյուրներից ներգրավվելով լրացուցիչ փոխառու միջոցներ, ֆինանսավորում է բյուջետայուն եկամուտները գերազանցող ծախսերը[6]: Սա, անշուշտ, հանգեցնում է պետական ներքին կամ արտաքին պարտքի ավելացման:





[6] Քաղաքացու բյուջե 2020:

ԲՅՈՒՋԵԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ինչպե՞ս վերլուծել բյուջետային տեղեկատվությունը

- Բյուջետային վերլուծությունները գործիք են հանրային ռեսուրսների հավաքագրման և ծախսման քննության, նպատակադրված գործողությունների և դրանց իրականացման արդյունքների վերաբերյալ տեղեկատվության ապահովման, բյուջետային տեղեկատվության մեկնաբանման համար:
- Բյուջետային վերլուծությունները և դրանց կիրառությունները տարբեր են: Դրանք կարող են նպաստել ծրագրերի իրականացման խնդիրների լուծմանը, հիմքեր և տեղեկատվություն ստեղծել ծրագրերի բարելավման համար, աջակցել հանրության կողմից բյուջետային ծախսերի վերահսկմանը և մշտադիտարկմանը, նպաստել հանրության և պետական մարմինների փոխհամագործակցությանը և այլն:
- Բյուջետային վերլուծությունները կարող են իրականացվել տարբեր ուղղություններով և տարբեր տեսանկյուններից՝ պայմանավորված դրանց հիմքում դրված նպատակներով:
- Բյուջետային վերլուծությունները կարող են առնչվել բյուջետային գործընթացի բոլոր փուլերին՝ յուրաքանչյուր դեպքում շեշտադրելով կոկրետ խնդիր և ներկայացնելով տվյալ փուլում արդիական տեղեկատվությունը: Օրինակ, բյուջեի մշակման սկզբնական փուլում՝ հիմնվելով բյուջետային ուղերձի վրա, կարելի է վերլուծել և ներկայացնել բյուջետային քաղաքականության հիմնական ուղղությունները, բյուջետային եկամուտների կանխատեսումները, բյուջեի հնարավոր ազդեցությունները տարբեր սոցիալական խմբերի վրա, իրականացնել բյուջետային հիմնական ցուցանիշների համեմատական վերլուծություններ և այլն:
- Ցանկացած բյուջե վերլուծելիս՝ ոլորտային, ծրագրի, միջոցառման, համայնքային կամ գերատեսչության, անկախ բյուջետային ռեսուրսները ծախսող պետական մարմնի կարգավիճակից, անկախ ծախսվող ռեսուրսի ուղղությունից կամ նպատակից, կարևոր է դիտարկել կամ վերլուծել մի քանի հիմնական հարցեր՝ հասկանալու Ձեզ հետաքրքրող բյուջետային հոդվածի ֆինանսավորման ծավալը և դրա փոփոխությունը, գնահատելու դրա տեղը և դերը կառավարության առաջնահերթություններում:

Ֆինանսավորման ծավալների և միտումների վերլուծություն

- Ուսումնասիրվող բյուջետային կատեգորիայի վերլուծությունը սովորաբար սկսվում է ֆինանսավորման ծավալի մեծութ-

յան դիտարկմամբ և դրա համեմատությամբ նախորդող ժամանակահատվածի/ների հետ: Այսինքն, հաշվարկվում է ֆինանսավորման մեծության բացարձակ և հարաբերական աճերը համեմատվող ժամանակահատվածի համեմատությամբ: Քննարկվում է աճի մեծությունը՝ մեծ է, թե փոքր, հնարավորություն ստեղծում է արդյոք այդ աճի ցուցանիշը Ձեզ հետաքրքրող հոդվածը համարել կառավարության կողմից կարևորված ուղղությունների, ոլորտների կամ ծրագրերի շարքում և այլն: Արդյոք նախատեսված ռեսուրսները ձևավորում են էական փոփոխությունների սպասումներ:

- Վերլուծության նպատակից ելնելով ուսումնասիրվող ժամանակահատվածի տևողությունը կարող է տարբեր լինել, կարող է ընդգրկել 2 և ավելի տարիներ և հնարավորություն ստեղծել վերլուծել, թե ինչպիսին է բյուջետային առանձին ծախսերի դինամիկան տարիների ընթացքում, արդյոք միտումները դրական են, թե ոչ:
- Այս և նման նպատակներով օգտագործվում են աճերի հաշվարկման պարզ բանաձևեր.

Բացարձակ աճ =
= Ընթացիկ տարվա արժեք
− Բազային տարվա արժեք

Հարաբերական աճ =
$$= \frac{\text{Ընթացիկ տարվա արժեք}}{\text{Բազային տարվա արժեք}} \times 100 - 100$$

Գերակայությունների վերլուծություն

- Արդոք վերլուծվող բյուջետային ծախսերը, ընդհանուր առմամբ մեծ կարևորություն և գերակայություն ունեն թե՛ ուսումնասիրվող տարում և թե՛ նախորդ ժամանակահատվածներում: Կան արդյոք կառավարության քաղաքականությունների փոփոխություններ այս իմաստով, ինչպիսին են դրանք և այլն: Այս և առնչվող մի շարք այլ հարցերին պատասխանելու համար կարևոր է վերլուծել, թե որո՞նք են այն ոլորտները կամ ծրագրերը, որոնց ֆինանսավորման ծավալներն ամենից մեծն են ընդամենը բյուջետային ծախսերում կամ ուսումնասիրվող ոլորտի ծախսերում, որո՞նք են այն ծրագրերը, կամ ոլորտները, որոնց ուղղված ռեսուրսների աճերն ամենից մեծն են: Նաև մասնավորեցնել, թե դրանցից որո՞նք են, որ ապահովում են ընդամենը բյուջետային ծախսերի աճի գերակշռող մասը:

Օրինակ, 2023 թվականին պետական բյուջեի առաջին երեք ամենից մեծ ֆինանսավորում ունեցող բյուջետային ծրագրեր են «ՀՀ պաշտպանության ապահովում», «Կենսաթոշակային ապահովություն» և «Պետական պարտքի կառավարում» ծրագրերը, որոնք հաշվում են ընդամենը բյուջետային ծախսերի 46.6 տոկոսը: Տասը խոշոր ծրագրերի բյուջեն կազմում է ընդամենը

պետական ծախսերի 69.4 տոկոսը: Կարող ենք նշել, որ քաղաքականությունների գերակայությունները նախորդ տարվա համեմատ էապես չեն փոխվել. 10 խոշոր ծրագրերը մնացել են անփոփոխ (տե՛ս պատկեր 8):

- Որևէ բյուջետային ծրագրին հատկացվող ռեսուրսների մասնաբաժինը ընդամենը բյուջետային ծախսերում հաշվարկելու համար կիրառվում է հետևյալ բանաձևը.

$$\text{Մասնաբաժին} = \frac{\text{Բյուջետային ծրագրի ծախսեր}}{\text{Ընդհանուր բյուջետային ծախսեր}} \times 100$$

- Նույն տրամաբանությամբ կարելի է վերլուծել նաև առաջին հինգ կամ տաս բացարձակ մեծությամբ ամենամեծ, նաև ամենամեծ աճ արձանագրած ծախսերը կամ ծրագրերը:
- Գերակա ծրագրերի վերլուծությունը կարևոր է նաև առանձին գերատեսչությունների կամ ոլորտների մակարդակով՝ հասկանալու մի դեպքում կառավարության քաղաքականությունների գերակա ուղղությունները, մյուս դեպքում՝ ոլորտային քաղաքականության գերակա ուղղությունները:

Պատկեր 8. Պետական բյուջեի 10 խոշոր ծրագրերը

	2023			2022		2023/2022	
	դիրքը	մլրդ դրամ	կշիռը	դիրքը	մլրդ դրամ	մլրդ դրամ	տոկոս
ՀՀ պաշտպանության ապահովում	1	512.8	19.8	1	476.1	36.7	7.7
Կենսաթոշակային ապահովություն	2	422.3	16.3	2	411.9	10.4	2.5
Պետական պարտքի կառավարում	3	273.0	10.5	3	198.4	74.6	37.6
Հանրակրթության ծրագիր	4	127.3	4.9	4	103.3	24.0	23.3
Ճանապարհային ցանցի բարելավում	5	116.7	4.5	6	83.1	33.5	40.4
Տարածքային զարգացում	6	99.0	3.8	5	86.5	12.6	14.5
Սոցիալական ապահովություն	7	76.3	2.9	8	73.9	2.4	3.3
Ոստիկանության ոլորտի քաղաքականության մշակում, կառավարում, կենտրոնացված միջոցառումներ, մոնիտորինգ և վերահսկողություն	8	74.1	2.9	7	78.4	(-4.3)	(-5.5)
Ժողովրդագրական վիճակի բարելավում	9	51.3	2.0	10	40.0	11.3	28.3
Ազգային անվտանգություն	10	44.5	1.7	9	45.2	(-0.7)	(-1.6)

Շահառուների վերլուծություն: Մեկ շահառուի հաշվով ծախսեր

- Ովքե՞ր են մեր շահառուները, ի՞նչ և որքա՞ն ծառայություններ են նրանց մատուցվում և արդյո՞ք բյուջեով նախատեսված ֆինանսավորման ծավալների աճը նշանակում է շահառուներին մատուցվող ծառայությունների մակարդակի էական փոփոխություն: Այս և նման այլ հարցերին պատասխանելու համար անհրաժեշտ է բյուջետային ծախսերը վերլուծելիս հաշվի առնել կոնկրետ ծառայությունները ստացող շահառուների խմբերը և քանակները:
- Երբեմն միայն ֆինանսավորման ծավալների աճի վերլուծությունը չի կարող բավարար տեղեկատվություն պարունակել և թույլ տալ գնահատել շահառուներին մատուցվող ծառայությունների քանակների աճը: Այս նպատակով անհրաժեշտ է ծախսերը քննել մեկ շահառուի հաշվով և քննարկել համապատասխան փոփոխությունները:
- Հաշվարկների համար պետք է օգտագործել հետևյալ պարզ բանաձևը.

$$\text{Մեկ շնչի հաշվով ծախս} = \frac{\text{Ընդամենը ծախս}}{\text{Բնակչության/շահառուների թիվ}}$$

Ծախսերի ճշգրտում ըստ գնաճի

- Վերլուծության մեկ այլ կարևոր մոտեցում է գների մակարդակի և դրա փոփոխության դիտարկումը ծախսերը վերլուծելիս: Ինչու՞ է սա կարևոր: Քանի որ մեր ժամանակներում ապրանքների և ծառայությունների գներն աճի հակվածություն ունեն, հետևաբար երբեմն մեզ անհրաժեշտ կլինի, հատկապես գների մեծ աճերի դեպքում, ճշգրտել բյուջետային ծախսերն ըստ գների մակարդակի փոփոխության: Այսինքն՝ հասկանալ, եթե գների մակարդակի աճը բացառենք, կամ այլ կերպ ասած՝ ծախսերը մաքրենք գների մակարդակի փոփոխության ազդեցությունից, բյուջեով հատկացված ռեսուրսներն արդյո՞ք բավարար կլինեն նախորդ տարվա ծառայությունների կամ ապրանքների ծավալը շահառուին մատուցելու համար: *Օրինակ, ենթադրենք նախորդ տարի առանձին բյուջետային հոդվածով մատուցվել է 50 մլն դրամ արժեքով ծառայություններ, այս տարի կառավարությունը որոշել է ծառայությունների ֆինանսավորման մակարդակը պահել նույնը, այսինքն՝ 50 մլն դրամ: Արդյո՞ք սա նշանակում է ծառայությունների մատուցում նախորդ տարվա մակարդակով: Այս հարցին պատասխանելու համար մեզ անհրաժեշտ է ճշտել շահառուների թվաքանակը և մատուցվող ծառայությունների գների փոփոխությունը: Եթե շահառուների թվաքանակը մնացել է նույնը, իսկ օրինակ՝ ծառայության գներն աճել են 25 տոկոսով, սա նշանակում է, կառավարության կողմից պլանա-*

վորած բյուջետային ռեսուրսների սահմաններում շահառուներին մատուցվող ծառայությունների ծավալը կնվազի 25 տոկոսով: Կամ որ նույնն է՝ նախորդ տարվա գների պայմաններում մատուցվող ծառայությունների ընդհանուր ծավալը կկազմի 40 մլն դրամին համարժեք:

- Գների մակարդակի փոփոխության նկատմամբ ճշգրտված ֆինանսավորման ծավալները գնահատելու համար պետք է օգտվել գների ինդեքսներից:
- Պայմանավորված մեզ հետաքրքրող ծախսերի ընդգրկման շրջանակով մենք կարող ենք որոշել, թե գների մակարդակը բնութագրող որ կոնկրետ ինդեքսից օգտվենք: *Օրինակ, եթե վերլուծության օբյեկտը ՀՀ ԱՆ կողմից իրականացվող «Դեղապահովման ծրագրի» ծախսերն են, ապա ձեռքբերվող դեղերի քանակն ուսումնասիրելու համար կօգտվենք դեղագործական ապրանքների գների ինդեքսից: Իսկ եթե վերլուծության օբյեկտը ճանապարհաշինարարության կամ շենքերի կառուցման ծախսերն են, ապա անհրաժեշտ է դիտարկել շինարհարության գների ինդեքսը:*
- Բյուջետային ծախսերը գների ազդեցությունից մաքրելու համար, կամ այլ կերպ ասած՝ բյուջետային ծախսերի իրական արժեքը հաշվարկելու համար կիրառվում է հետևյալ բանաձևը.

$$\text{Իրական արժեք} = \frac{\text{Անվանական արժեք}}{\text{ՀՆԱ դեֆլյատոր (կամ՝ ՍԳԻ)}} \times 100$$

- Ծախսերի իրական արժեքը գնահատելուց հետո կարող ենք արդեն հաշվել վերլուծվող կատեգորիայի **իրական աճն** ըստ հետևյալ բանաձևի.

$$\text{Իրական աճ} = \frac{\text{Իրական արժեք}}{\text{ԲՏ անվանական արժեք}} \times 100 - 100$$

Կան տարբեր ապրանքների, ծառայությունների շուկանրում գների մակարդակը բնութագրող ինդեքսներ, օրինակ՝ դեղագործական ապրանքների գների ինդեքս, գյուղատնտեսական ապրանքների գների ինդեքս, ներմուծվող ապրանքների գների ինդեքս և այլն, սակայն դրանցից ամենակիրառելին դա ***ՍԳԻ-ն և ՀՆԱ-ի դեֆլյատորն*** *է:*

Սպառողական գների ինդեքսը (ՍԳԻ) *բնութագրում է սպառողական ապրանքների և ծառայությունների զամբյուղի գնի փոփոխությունը որոշակի ժամանակահատվածում: Սպառողական զամբյուղը իր մեջ կարող է ներառել ինչպես տվյալ երկրում արտադրված, այնպես էլ ներմուծված պարենային և ոչ պարենային սպառողական ապրանքներ և ծառայություններ: Հայաստանում սպառողական զամբյուղը ներառում է 425 անուն ապրանք և ծառայություն: ՍԳԻ-ն որոշվում է սպառողական զամբյուղի (ՍԶ) ընթացիկ ժամանակաշրջանի գնի և բազային (համեմատվող) ժամանակաշրջանի գնի հարաբերությամբ:*

$$\text{ՍԳԻ} = \frac{\text{ՍԶ ընթացիկ արժեք}}{\text{ՍԶ բազային արժեք}} \times \mathbf{100}$$

ՀՆԱ-ի դեֆլյատորը *ցույց է տալիս ներքին տնտեսությունում արտադրվող ապրանքների և մատուցվող ծառայությունների գների ընդհանուր մակարդակի փոփոխությունը: Դեֆլյատորը անվանական և իրական ՀՆԱ-ի հարաբերությունն է:*

$$\text{ՀՆԱ դեֆլյատոր} = \frac{\text{Անվանական ՀՆԱ}}{\text{Իրական ՀՆԱ}} \times \mathbf{100}$$

- *Մեր օրինակում բյուջետային ծախսերի անվանական մակարդակը հավասար է 50 մլն դրամի, ՍԳԻ-ն կազմում է 125, հետևաբար ծախսերի իրական մակարդակը կկազմի 40 մլն դրամ, իսկ իրական աճը՝ (-20) տոկոս:*

Արդյունավետության վերլուծություն

- Ծախսերի/ծրագրի իրականացման արդյունավետությունը վերլուծելու համար պետք է դիտարկել թե որքան արդյունավետ են ռեսուրսները փոխակերպվել սպասվող արդյունքների՝ քանակի, որակի և ժամկետների տեսանկյունից: Որքա՞ն է արժեցել մեկ միավոր արդյունքը կամ մատուցված ծառայությունը, կամ՝ մեկ միավոր ծախսի դիմաց որքա՞ն արդյունք է ստեղծվել/ծառայություն է մատուցվել. սրանք են այն հիմնական հարցերը որոնք պետք է պատասխան ստանան:
- **Ծախսեր-օգուտներ վերլուծության** մեթոդը հնարավորություն է տալիս պետական ծախսերը համադրել ակնկալվող արդյունքների հետ: Նկատենք, որ եթե ծախսերի դրամական գնահատումը իրագործելի խնդիր է, ապա քաղաքականության օգուտների գնահատումը, կամ դրանց դրամական համարժեքի գնահատումը հաճախ դժվար իրագործելի է, որոշ դեպքերում՝ անհնար:
- Մեթոդը հաշվի է առնում ինչպես դրամական, այնպես էլ ոչ դրամական ծախսերն ու օգուտները, որոնք վերաբերում են ողջ հասարակությանը՝ ցանկացած բացասական ազդեցություն գնահատելով որպես ծախս, իսկ դրականները՝ որպես օգուտ և հաշվի առնել նաև արտաքին ազդեցությունները (երրորդ կողմի վրա), ինչպես օրինակ՝ մթնոլորտի և շրջակա միջավայրի աղտոտվածություն, աղմուկ, արդյունաբերական թափոններ և այլն: Ծախսեր-օգուտներ վերլուծության մեթոդի կիրառման հիմնական քայլերն են՝
  - սահմանված արդյունքի ձեռքբերմանն ուղղված ծախսերի և ակնկալվող օգուտների որոշումը և դասակարգումը,
  - սահմանված արդյունքի ձեռքբերման այլընտրանքների գնահատումը,
  - յուրաքանչյուր այլընտրանքի ծախսերի և օգուտների դրամական համարժեքի գնահատումը,
  - ապագայում առաջացող ծախսերի և օգուտների ներկա արժեքի հաշվարկը,
  - յուրաքանչյուր տարբերակի ծախսերի արդյունավետության գործակցի հաշվարկը:
- Ծառայությունների մատուցման արդյունավետության քննարկման հարցերը չպետք է անտեսեն նաև շահառուների յուրաքանչյուր խմբին մատուցվող ծառայությունների ամբողջականության, քանակի, որակի, նաև մատուցման ժամկետների՝ սահմանված նորմատիվներին և չափաքանակներին

համապատասխանության վերլուծությունները:

- **Հասցեականության գնահատում.** Պարզելու համար, թե որքանով է հասցեական մատուցվող ծառայությունների բաշխումը, պետք է որոշել՝ առկա՞ են արդյոք ծրագրում պոտենցիալ շահառուների ընդգրկման և չընդգրկման սխալներ: Սա նշանակում է, առաջին դեպքում գնահատել այն շահառուների ընդգրկումը (կշիռը), որոնք չեն համապատասխանում ծրագրային պահանջներին, իսկ երկրորդ դեպքում՝ նրանց կշիռը, որոնք լիարժեք համապատասխանելով շահառուներին ներկայացվող պահանջներին, դուրս են մնացել ծառայություններ ստացողների շրջանակից:

Պետական բյուջեի ամփոփ վերլուծություն

- Պետական բյուջեն կառավարության հարկաբյուջետային քաղաքականության իրականացման հիմնական գործիքն է: Մի կողմից բյուջեն անմիջական ազդեցություն ունի կառավարության պարտքի, գնաճի, տնտեսական աճի և զբաղվածության վրա, իսկ մյուս կողմից տնտեսական միջավայրը և իրականացվող հարկաբյուջետային քաղաքականությունն են որոշում հավաքագրվող եկամուտների չափը և իրականացվող ծախսերի ուղղությունները: Հետևաբար կարևոր է բյուջեի վերլուծությունը սկսել հարկաբյուջետային քաղաքականության ուսումնասիրմամբ:
- Տարեկան բյուջեն վերլուծելիս, առաջին հերթին պետք է հաշվել բյուջեի ընդամենը եկամուտների և ընդամենը ծախսերի փոփոխությունը (աճ կամ նվազում), անհրաժեշտության դեպքում համեմատել նաև նախորդ տարիների աճերի հետ:
- Հաջորդ կարևոր վիճակագրությունը դա պլանավորված եկամուտների և ծախսերի արդյունքում ձևավորվող բյուջեի դեֆիցիտի մակարդակն է, դրա համեմատությունը նախորդ ժամանակահատվածների մակարդակների հետ:
- Անշուշտ կարևոր է նաև դեֆիցիտի ֆինանսավորման կառուցվածքի և դրա բաղադրիչների փոփոխության վերլուծությունը: Այս վերլուծությունը հնարավորություն կտա հասկանալ երկրի փոխառության պահանջը, այսինքն՝ պետական պարտքի փոփոխության հնարավոր չափը, նաև, թե որ աղբյուրներից է փոխառնելու կառավարությունը՝ արտաքին աշխարհից, թե մեր երկրի բնակչությունից կամ այլ ներքին աղբյուրներից:
- Ընդհանրապես, ամփոփ բյուջետային վիճակագրությունը վերլուծելիս կարևոր է դրանց մակարդակների համեմատությունը ՀՆԱ-ի նկատմամբ, այսինքն՝ հաշվել ամփոփ ցուցանիշներից յուրաքանչյուրի կշիռը ՀՆԱ-ում, ինչը հնարավորություն է ստեղծում վերլուծություններում հաշվի առնել տնտեսական զարգացումները և այս առումով ունենալ նախորդ տարիների նկատմամբ համադրելի

մակարդակներ, ինչպես նաև ապահովել միջազգային համադրումների համար կիրառելի ցուցանիշներ: Խոսքը վերաբերվում է թե՛ եկամուտներ/ՀՆԱ, թե՛ ծախսեր/ՀՆԱ և թե՛ բյուջեի դեֆիցիտ/ՀՆԱ հարաբերակցությունների քննարկմանը:

- Տարբեր երկների, մարզերի կամ ոլորտների միջև համադրումներ իրականացնելիս ՀՆԱ-ում կշիռների հաշվարկներից բացի կարևոր է նաև մեկ շնչի հաշվով մակարդակների ուսումնասիրությունները:
- Ծախսերի տնտեսագիտական բովանդակությունը հասկանալու համար կարևոր է առնվազն վերլուծել բյուջետային ծախսերի կառուցվածքն ըստ ընթացիկ և կապիտալ ծախսերի: Հասկանալ, սրանցից յուրաքանչյուրի կշիռը և դրա փոփոխությունը ուսումնասիրվող բյուջետային տարվա ընթացքում:
- Այս վերլուծությունները հավասարապես կարելի է իրականացնել թե՛ պլանավորված բյուջեի մակարդակում, և թե՛ կատարված բյուջեի մակարդակում: Առաջին դեպքում դա մեզ թույլ է տալիս գնահատել, թե ինչպիսի ծախսային քաղաքականություն է կառավարությունը նախատեսում և դրա հիմքում տնտեսական զարգացման ինչ կանխատեսումներ են առկա, երկրի պարտավորությունների ինչպիսի փոփոխությունների կարող է հանգեցնել ընտրված քաղաքականությունը: Փաստացի բյուջեի վերլուծությամբ ամրագրվում են փաստերը և իրականացված հարկաբյուջետային քաղաքակա-նության արդյունքները կոնկրետ բյուջետային տարում:
- Շատ կարևոր է նաև պլանավորած և փաստացի բյուջեների համապատասխան ցուցանիշների համադրումները: Հայտնի է, որ տարբեր օբյեկտիվ պատճառներով տարվա ընթացքում բյուջետային փաստաթուղթը կառավարության կողմից կարող է վերանայվել և ճշգրտվել: Հետևաբար, բյուջեի կատարման ցուցանիշները կառավարությունը սովորաբար համեմատում է ճշգրտված բյուջետային ցուցանիշների հետ: Մինչդեռ, եթե հասարակությունը նպատակ ունի գնահատել կառավարության կողմից քաղա-քականությունների պլանավորման և իրականացման որակը, հետևողականությունը և տարվա ընթացքում բյուջետային փոփոխությունների ծավալը, ապա ցանկալի է բյուջեի կատարման ցուցանիշները համեմատել նույն տարվա բյուջեի մասին օրենքով պլանավորված ցուցանիշների հետ: Նույն նպատակի համար կարելի է նաև համեմատել բյուջետային ծախսերի ճշգրտված մակարդակները՝ բյուջեի մասին օրենքով հաստատված համապատասխան ցուցանիշների հետ:

Պատկեր 9. Ցուցանիշների հաշվարկման օրինակ

Առկա տեղեկատվություն

	2021 թվական	2022 թվական
Պետական բյուջեի ծախսեր, մլրդ ՀՀ դրամ	2,061.9	2,322.4
ՀՆԱ, մլրդ ՀՀ դրամ	6,991.8	8,501.4
ՀՆԱ դեֆլյատոր, 2021 թվականի նկատմամբ	-	108.0
ՀՀ բնակչություն, մարդ	2,963,251	2,961,367

Ցուցանիշների հաշվարկ

Ցուցանիշ	Չափման միավոր	Բանաձև/հաշվարկ
Պետական բյուջեի ծախսերի կշիռը ՀՆԱ-ում	տոկոս	$= \frac{\text{ծախսեր}}{\text{ՀՆԱ}} \times 100 = \frac{2,322.4}{8,501.4} \times 100 = 27.3$
Պետական բյուջեի ծախսերի անվանական աճը նախորդ տարվա նկատմամբ	մլրդ դրամ	$= (\text{ընթացիկ տարվա ծախսեր} - \text{նախորդ տարվա ծախսեր}) = 2,322.4 - 2,061.9 = 260.4$
	տոկոս	$= \frac{\text{ընթացիկ տարվա ծախսեր}}{\text{նախորդ տարվա ծախսեր}} \times 100 - 100 = \frac{2,322.4}{2,061.9} \times 100 - 100 = 12.6$
Պետական բյուջեի ծախսերը 2021 թվականի գներով	մլրդ դրամ	$= \frac{\text{ամվանական արժեք}}{\text{ՀՆԱ դեֆլյատոր}} \times 100 = \frac{2,322.4}{108.0} \times 100 = 2,150,3$
Պետական բյուջեի ծախսերի իրական աճը նախորդ տարվա նկատմամբ	տոկոս	$= \frac{\text{իրական արժեք}}{\text{2021թ. անվանական արժեք}} \times 100 - 100 = \frac{2,150,3}{2,061.9} \times 100 - 100 = 4,3$
Պետական բյուջեի ծախսերը մեկ շնչի հաշվով	հազար դրամ	$= \frac{\text{ծախսեր}}{\text{Բնակչության թվաքանակ}} = \frac{2,322.4 \times 1,000,000}{2,961,367} = 784.2$

Բյուջեի եկամուտների վերլուծություն

- Պետական բյուջեի եկամուտների հիմնական աղբյուրը տնտեսությունն է՝ քաղաքացիներից և բիզնեսից հավաքագրված հարկային և այլ եկամուտները, ինչպես նաև միջազգային կազմակերպություններից և օտարերկրյա կառավարություններից ստացված պաշտոնական դրամաշնորհները:
- Բյուջետային եկամուտները ընդունված է բաժանել հարկային և ոչ հարկային եկամուտների: Հարկային եկամուտները դրանք քաղաքացիների և ընկերությունների ուղղակի և անուղղակի հարկումից, ինչպես նաև տուրքերից հավաքագրված եկամուտներն են: Ոչ հարկային եկամուտները, ինչպես անունն է հուշում, չեն գոյանում հարկերից, դրանք են տարբեր աջակցությունները և նվիրատվությունները, պետական ձեռնարկություններից ստացված եկամուտները, պետական սեփականությունից ստացված վարձավճարները, և այլն:
- Պետական բյուջեի եկամուտների վերլուծության հիմնական մոտեցումները եկամուտների կառուցվածքի և դինամիկայի ուսումնասիրություններն են:
- Կարևոր է ներկայացնել և՛ հարկային եկամուտների ու տուրքերի կառուցվածքն ըստ տեսակների, նաև՝ դրամաշնորհների կառուցվածքն ըստ դոնորների ու նպատակի (տե՛ս [1], 5-7 էջեր):

Պատկեր 10. Պետական բյուջեի եկամուտների կառուցվածքը



- Կարևոր է ներկայացնել և՛ հարկային եկամուտների ու տուրքերի կառուցվածքն ըստ տեսակների, և՛ դրամաշնորհների կառուցվածքն ըստ դոնորների ու նպատակի:
- Պետք է կարևորել ոչ միայն բյուջետային եկամուտների կառուցվածքը, այլև թե կոնկրետ, որ հարկատեսակից մուտքերն են աճել ուսումնասիրվող ժամանակահատվածում և դա տնտեսական զարգացման ինչպիսի ազդակներ է պարունակում:
- *Օրինակ, 2022 թվականին ՀՀ պետական բյուջեի կառուցվածքում «հարկային եկամուտները և պետական տուրքերը» կազմել են ընդամենը եկամուտների 93.4 տոկոսը, իսկ պաշտոնական դրամաշնորհները՝ 0.7 տոկոսը: Հարկային եկամուտներից հատկապես էական է ԱԱՀ-ի, եկամտային հարկի և շահութահարկի դերը:*
- Եկամուտները վերլուծելիս կարևոր է նաև վերլուծել բյուջետային օժանադակության դրամաշնորհները, դրանց կառուցվածքը և դոնորներին: Դրամաշնորհները կարող են լինել ընդհանուր բնույթի և նպատակային (նախատեսված կոնկրետ նպատակով օգտագործման համար):
- Հայաստանի Հանրապետությանը դրամաշնորհներ տրամադրող դոնորները՝ կառավարությունները և միջազգային կառույցները, բազմաթիվ են: *Օրինակ, 2022 թվականին հիմնական խոշոր դոնորներն են եղել ԵՄ-ն, ՀԲ-ն և Գլոբալ հիմնադրամը: Ընդ որում, ընդհանուր բնույթի օժանդակություն տրամադրվել է ԵՄ-ի, ՄԱԿ-ի և ՀԲ-ի կողմից: Նպատակային օժանդակությունը կազմել է ընդամենը տրամադրված դրամաշնորհների 41.7 տոկոսը:*
- Նպատակային օժանդակության բնագավառի/ոլորտի ներկայացումը ևս էական է՝ արտաքին օժանդակության ուղղությունները հասկանալու համար:
- Բյուջետային եկամուտների վերլուծությունը կարող է համադրվել նաև ծախսերի վերլուծության հետ՝ գնահատելու, թե արդյոք կառավարության կողմից հավաքագրված ներքին եկամուտները բավարար են հիմնական ծրագրերը ֆինանսավորելու համար: Այսինքն՝ կարելի է նաև քննարկել միայն ներքին եկամուտների մեծությունը և համեմատել ծախսերի տարբեր մակարդակների հետ:

Բյուջեի դեֆիցիտի վերլուծություն

- Դեֆիցիտը վերլուծելիս կարևոր է կենտրոնանալ դեֆիցիտի ֆինանսավորման ներքին և արտաքին աղբյուրների, դրանց կշիռների, վերջիններիս աճերի կամ կրճատումների վրա: Կարևոր է նաև դեֆիցիտ/ՀՆԱ հարաբերակցության և դրա դինամիկայի վերլուծությունը (տե՛ս [1], 8-9 էջեր):
- Պետք է հիշել, որ բյուջեի դեֆիցիտը չի կարող գերազանցել կառավարության բյուջետային ուղերձում նշված առաջիկա տարվա համախառն ներքին արդյունքի 7.5 տոկոսը[7]: *Օրինակ, 2023 թվականի բյուջեի դեֆիցիտը կազմում է կանխատեսվող ՀՆԱ-ի 3.1 տոկոսը:*
- Դեֆիցիտի ֆինանսավորման հիմնական աղբյուրները դրանք ներքին և արտաքին աղբյուրներից փոխառու միջոցներն են, որոնք ուղղակիորեն հանգեցնում են պետական պարտքի մակարդակի և կառուցվածքի փոփոխությունների:
- Դեֆիցիտի արտաքին ֆինանսավորման հիմնական աղբյուրը վարկերը և փոխատվություններն են, իսկ ներքին ֆինանսավորման հիմնական աղբյուրը՝ գանձապետական պարտատոմսերի թողարկումներից մուտքերն են:
- *2022 թվականին պետական բյուջեի դեֆիցիտը կազմել է 179.5 մլրդ դրամ, նախորդ տարվա համեմատությամբ կրճատվել է 140.9 մլրդ դրամով կամ 44 տոկոսով: Դեֆիցիտը կազմել է ՀՆԱ-ի 2.1 տոկոսը և նախորդ տարվա համեմատությամբ այս ցուցանիշը կրճատվել է 2.5 տոկոսային կետով:*
- «Տոկոսային կետ»-ով համեմատությունները սովորաբար կիրառվում են այն բոլոր դեպքերում, երբ փորձում ենք համեմատել երկու տոկոսային մեծություններ և ցանկանում ենք ներկայացնել դրանց բացարձակ տարբերությունը:

Պատկեր 11. Պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրները



[7] «ՀՀ բյուջետային համակարգի մասին» օրենքի 12-րդ հոդված, 3-րդ մաս:

Բյուջեի ծախսերի վերլուծություն

- Պետական բյուջեի ծախսերը դասակարգվում են ըստ 4 հիմնական ուղղությունների.
  - **գործառական**
  - **գերատեսչական**
  - **տնտեսագիտական**
  - **ծրագրային:**
- Ստորև ըստ առանձին ուղղությունների կանդրադառնանք, թե ի՞նչ առանձնահատկություններ ունեն այդ դասակարգումները, որ դեպքում վրլուծության ի՞նչ բովանդակության վրա արժի կենտրոնանալ:

Պատկեր 12. Պետական բյուջեի ծախսերի դասակարգումների հիմնական բնութագրերը

Ինչպե՞ս վերլուծել գործառական ծախսերը

- Բյուջետային ծախսերի **գործառական (ֆունկցիոնալ)** դասակարգումը ցույց է տալիս հանրային հատվածի առանձին ոլորտներում տարաբնույթ գործառույթների իրականացմանն ուղղված ծախսերը:
- Գործառական դասակարգումն օգտագործվում է կառավարության կողմից իրականացվող քաղաքականության ոլորտային ուղղվածությունը, ոլորտային գերակայությունները գնահատելու համար: Այսինքն, եթե, օրինակ, գործառական դասակարգմամբ մեծ է առողջապահությանն ուղղվող ռեսուրսների կշիռը ընդամենը բյուջետային ծախսերում կամ նախորդ տարվա նկատմամբ ամենամեծ ծավալով աճել է առողջապահության ոլորտի ֆինանսավորման ծավալները, ապա կարող ենք պնդել, որ կառավարության ջանքերն ուղղված են առողջապահության ոլորտի զարգացմանը, որ առողջապահության ոլորտը կառավարության գերակայությունների թվում է (տե՛ս [1], 13-14 էջեր):
- Գործառական դասակարգումը ծախսերի այն խմբավորումն է, որն օգտագործվում է միջազգային համադրումներ իրականացնելիս: Ծախսերի այս դասակարգումը հիմնված է ԱՄՀ-ի կողմից մշակված միջազգային դասակարգիչների համակարգի վրա և նույն կերպ կիրառվում է գրեթե բոլոր երկրներում:
- Գործառական դասակարգմամբ ծախսերը խմբավորվում են ըստ դասերի, խմբերի և բաժինների: Խմբավորման առաջին մակարդակը բաժիններն են, հաջորդում են խմբերը, հետո՝ դասերը (դասակարգման ամբողջական կառուցվածքը տե՛ս Հավելված 2-ում):
- *Օրինակ, «Առողջապահություն» բաժինը գործառական կառուցվածքում ներկայացված է 5 խմբերով՝*

- *Բժշկական ապրանքներ, սարքեր և սարքավորումներ,*
- *Արտահիվանդանոցային ծառայություններ,*
- *Հիվանդանոցային ծառայություններ,*
- *Հանրային առողջապահական ծառայություններ,*
- *Առողջապահություն (այլ դասերին չպատկանող):*

▪ *Բերված խմբերից յուրաքանչյուրը դասակարգվում է ըստ առանձին դասերի: Այսպես, «Հիվանդանոցային ծառայություններ» խումբը ներառում է 3 դաս՝*

- *Ընդհանուր բնույթի հիվանդանոցային ծառայություններ,*
- *Մասնագիտացված հիվանդանոցային ծառայություններ,*
- *Մոր և մանկան բժշկական ծառայություններ:*

▪ Դասերից յուրաքանչյուրն իր հերթին տրոհվում է ըստ ֆինանսական ռեսուրսների բաշխման հոդվածների, որոնք համընկնում են Ծրագրային դասակարգման բյուջետային ծրագրերի միջոցառումների հետ:

Պատկեր 13. Գործառական դասակարգման օրինակ

Բաժին	*Խումբ*	*Դաս*	
04			ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ
	01		***Բժշկական ապրանքներ, սարքեր և սարքավորումներ***
	02		***Արտահիվանդանոցային ծառայություններ***
	03		***Հիվանդանոցային ծառայություններ***
		01	Ընդհանուր բնույթի հիվանդանոցային ծառայություններ
		02	Մասնագիտացված հիվանդանոցային ծառայություններ
		03	Մոր և մանկան բժշկական ծառայություններ
	04		***Հանրային առողջապահական ծառայություններ***
	06		***Առողջապահություն (այլ դասերին չպատկանող)***

Բյուջետային ծախսերի գործառական դասակարգմամբ ներկայացման բաժինները 11-ն են:

Պատկեր 14. Գործառական դասակարգման բաժինները

01	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ
02	Պաշտպանություն
03	Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն
04	Տնտեսական հարաբերություններ
05	Շրջակա միջավայրի պաշտպանություն
06	Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն
07	Առողջապահություն
08	Հանգիստ, մշակույթ և կրոն
09	Կրթություն
10	Սոցիալական պաշտպանություն
11	Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր

▪ Վերջին բաժինը՝ «Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր»-ը ներառում է կառավարության պահուստային ֆոնդը, որը պլանավորվում է տվյալ

տարվա պետական բյուջեում չկանխատեսված, ինչպես նաև բյուջետային երաշխիքների ապահովման ծախսերի ֆինանսավորման համար:

- Պահուստային ֆոնդից հատկացումները կատարվում են կառավարության որոշումների հիման վրա: Պետք է հիշել, որ պլանավորվող պահուստային ֆոնդի ընդհանուր մեծությունը չի կարող գերազանցել տվյալ տարվա պետական բյուջեի ընդհանուր ծախսերի 5 տոկոսը:[8]
- *Օրինակ, 2023 թվականին պահուստային ֆոնդի ընդհանուր մեծությունը կազմում է 35.9 մլրդ դրամ կամ պետական բյուջեի ծախսերի 1.4 տոկոսը:*
- Ծախսերի ոլորտային վերլուծություն իրականացնելիս էական է բյուջեի ընդհանուր ծախսերում յուրաքանչյուր ոլորտին/բաժնին ուղղվող ռեսուրսների կշիռների, նաև նախորդ տարիների նկատմամբ աճերի վերլուծությունը: Կարելի է ներկայացնել և վերլուծել ինչպես անվանական այնպես էլ՝ իրական մակարդակները (տե՛ս [2], 8-10 էջեր):
- Ոլորտային գերակայությունները մատնանշելու համար առաջին հերթին անհրաժեշտ է ներկայացնել պետական բյուջեի ոլորտային կառուցվածքը:
- *Ինչպես երևում է ստորև բերված պատկերից, 2022 թվականին «Սոցիալական պաշտպանություն» ոլորտը տնտեսության գերակա ոլորտն է, որին ուղղվող ռեսուրսները կազմել են ընդհամենը բյուջետային ծախսերիավելի քան մեկ քառորդը՝ 27.4 տոկոսը:*
- Հաջորդիվ պետք է համեմատել ոլորտային ֆինանսավորման կշիռները նախորդ տարվա կամ տարիների նույն ցուցանիշների հետ: *Այսպես, թեև «Սոցիալական պաշտպանություն» ոլորտի ֆինանսավորումն ամենամեծն է, այնուամենայնիվ պետական ծախսերում ոլորտի մասնաբաժինը*

Պատկեր 15. ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի ոլորտային կառուցվածքը

[8] «ՀՀ բյուջետային համակարգի մասին» օրենքի 19-րդ հոդված, 2-րդ մաս:

կրճատվել է 3.5 տոկոսային կետով՝ 30.9-ից դառնալով 27.4 տոկոս:

- Կարևոր վերլուծական ուղղություն է յուրաքանչյուր ոլորտին ուղղվող ռեսուրսների բացարձակ աճերի քննարկումը: *Այս իմաստով աչքի է ընկնում «Պաշտպանություն» ոլորտը, որին ուղղվող ֆինանսավորումն ավելացել է ավելի քան 144.4 մլրդ դրամով կամ 43 տոկոսով: Վերջինս հանգեցրել է պետական բյուջեում ոլորտին ուղղվող ռեսուրսների մասնաբաժնի ավելացմանը 4.7 տոկոսային կետով՝ 16.8 տոկոսից 21.4 տոկոս:*
- *Նկատենք նաև, որ հարաբերական արտահայտությամբ ֆինանսավորման ծավալները էապես աճել են «Հանգիստ, մշակույթ և կրոն» ոլորտում՝ 44.2 տոկոս:*
- Որպիսի կարողանանք ավելի մանրամասն վերլուծել յուրաքանչյուր ոլորտին ուղղվող ռեսուրսների բաշխման ուղղությունները և ծավալները (աճը կամ կրճատումը), անհրաժեշտ է վերլուծել յուրաքանչյուր ոլորտի հատկացումներն ըստ միջոցառումների:

Դասակեր 16. Պետական բյուջեի ոլորտային կառուցվածքը

		Ֆինանսավորում, մլրդ դրամ		Մասնաբաժինը պետական բյուջեում, տոկոս		Փոփոխությունը, 2022-ը 2021-ի նկատմամբ	
		2021	2022	2021	2022	մլրդ դրամ	տոկոս
	Ընդամենը պետական բյուջե	2,004.3	2,242.6	100.0	100.0	238.3	11.9
01	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	381.0	407.4	19.0 = $\frac{381.0}{2,004.3} \times 100$	18.2 = $\frac{407.4}{2,242.6} \times 100$	26.5 = $407.4 - 381.0$	6.9 = $\frac{407.4}{381.0} \times 100 - 100$
02	Պաշտպանություն	336.0	480.4	**16.8**	**21.4**	**144.4**	43.0
03	Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն	160.0	196.9	8.0	8.8	36.9	23.0
04	Տնտեսական հարաբերություններ	151.8	175.8	7.6	7.8	24.0	15.8
05	Շրջակա միջավայրի պաշտպանություն	6.0	6.8	0.3	0.3	0.8	13.0
06	Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն	9.5	9.5	0.5	0.4	-0.1	-0.7
07	Առողջապահություն	160.5	142.2	8.0	6.3	-18.3	-11.4
08	Հանգիստ, մշակույթ և կրոն	30.4	43.9	1.5	2.0	13.4	**44.2**
09	Կրթություն	149.1	165.4	7.4	7.4	16.3	10.9
10	Սոցիալական պաշտպանություն	620.0	**614.5**	**30.9**	**27.4**	-5.5	- 0.9

- Գործառական դասակարգումը հնարավորություն է տալիս ոչ միայն վերլուծել բյուջետային ծախսերի բաշխումը ըստ ոլորտների, այլև՝ գնահատել յուրաքանչյուր ոլորտի ներսում գերակա ուղղությունները: Այս նպատակով անհրաժեշտ է հաշվել բյուջետային «դասի» կամ «խմբի» մասնաբաժինը տվյալ բյուջետային «բաժնում» կամ «խմբում» (տե՛ս [3], 10-12 էջեր):

Պատկեր 17. Բյուջեի կառուցվածքն ըստ գործառական դասակարգման ներկայացման օրինակ

Բաժին	Խումբ	Դաս		2022 մլրդ դրամ	Մասնաբաժինը: Հաշվարկ	Մասնաբաժինը: տոկոս
Ընդամենը ծախսեր				**2,242.6**	-	-
03	ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳ, ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ			**196.9**	= (196.9/2,242.6) × 100	8.8
	01	Հասարակական կարգ և անվտանգություն		**128.6**	= (128.6/196.9) × 100	65.3
		01	Ոստիկանություն	78.4	= (78.4/128.6) × 100	60.9
		02	Ազգային անվտանգություն	45.1	= (45.1/128.6) × 100	35.1
		03	Պետական պահպանություն	5.1	= (5.1/128.6) × 100	4.0
	02	Փրկարար ծառայություն		13.8	= (13.8/196.9) × 100	7.0
	03	Դատական գործունեություն և իրավական պաշտպանություն		22.6	= (22.6/196.9) × 100	11.5
	04	Դատախազություն		6.5	= (6.5/196.9) × 100	3.3
	05	Կալանավայրեր		13.8	= (13.6/196.9) × 100	7.0
	07	Նախաքննություն		11.5	= (11.5/196.9) × 100	5.8

Բաժնի կշիռը ընդամենը բյուջեի ծախսերում

Դասերի կշիռը «Հասարակական կարգ և անվտանգություն» խմբում

100%

100%

Խմբերի կշիռը «Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն» բաժնում

Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեության ծախսերում գերակշռում են Ոստիկանությանն ուղղված ծախսերը:

- Բյուջեի **գերատեսչական** դասակարգումը հնարավորություն է տալիս վերլուծել բյուջետային ռեսուրսների բաշխումն ըստ պատասխանատու պետական մարմինների կամ ծախսող պետական և ոչ պետական մարմինների (տե՛ս [1], 15 էջ):
- Առանձնացվում են բյուջետային ռեսուրսների համար պատասխանատու մարմինները (ԲԳԿ - բյուջեի գլխավոր կարգադրիչ) և ռեսուրսներն անմիջական ծախսող մարմինները:
- Պետական գերատեսչությունների կողմից տնօրինվող ռեսուրսների համեմատական վերլուծություն իրականացնելու համար անհրաժեշտ է հաշվարկել յուրաքանչյուր մարմնի ֆինանսավորման կշիռը պետական բյուջեի ընդհանուր ծախսերում և ֆինանսավորման մակարդակի փոփոխությունը՝ հարաբերական և բացարձակ մեծությամբ:
- *Օրինակ, ընտրված գերատեսչություններից ամենամեծը ՏԿԵՆ բյուջեն է, որը թեև նախորդ տարվա նկատմամբ աճել է 10.9 տոկոսով կամ 21.9 մլրդ դրամով, սակայն պետական ծախսերում մասնաբաժինը նույնն է մնացել՝ 10 տոկոս:*
- *Բացարձակ մեծությամբ համամատաբար մեծ է ԿԳՄՄՆ բյուջեի աճը՝ 27.8 մլրդ դրամ, իսկ հարաբերական արտահայտությամբ մեծ է ՀՀ վիճակագրության կոմիտեի ֆինանսավորման աճը՝ 27.6 տոկոս (տե՛ս պատկեր 18):*

Պատկեր 18. Պետական բյուջեի կառուցվածքն ըստ գերատեսչությունների, օրինակ

	Ֆինանսավորում, մլրդ դրամ		Մասնաբաժինը պետական բյուջեում, տոկոս		Փոփոխությունը, 2022-ը 2021-ի նկատմամբ	
	2021	2022	2021	2022	մլրդ դրամ	տոկոս
Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն (ԿԳՄՄՆ)	174.8	202.6	$8.7 = \frac{174.8}{2,004.3} \times 100$	$9.0 = \frac{202.6}{2,242.6} \times 100$	$\mathbf{27.8} = 202.6 - 174.8$	$15.9 = \frac{202.6}{174.8} \times 100 - 100$
Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն (ՏԿԵՆ)	201.4	223.3	10.0	**10.0**	21.9	10.9
Էկոնոմիկայի նախարարություն	43.4	53.1	2.2	2.4	9.7	22.4
Բարձրագույն դատական խորհուրդ	12.4	14.5	0.6	0.6	2.1	17.0
ՀՀ վիճակագրական կոմիտե	2.5	3.2	0.1	0.1	0.7	**27.6**

- Բյուջեից ֆինանսավորվող պետական գերատեսչությունների ամբողջական ցանկը ներկայացված է Հավելված 1-ում:
- Պետական առանձին մարմինների ծախսվող ռեսուրսների կառուցվածքը վերլուծելու համար կարևոր է վերլուծության նպատակը: Օրինակ՝ եթե մեր խնդիրն է հասկանալ, թե պետական մարմինը (ՊՄ) իր կողմից իրականացվող X թվով ծրագրերից յուրաքանչյուրին ինչպիսի ռեսուրսներ է ուղղում, կամ որ ծրագիրն է պետական մարմնի համար գերակա, ապա պիտի ուսումնասիրենք ՊՄ բյուջեի կառուցվածքն ըստ իր կողմից իրականացվող բյուջետային ծրագրերի: Իսկ եթե կարևոր է հասկանալ, թե ծախսվող բյուջետային ռեսուրսների մեջ օրինակ՝ որ մասն են կազմում աշխատավարձերին ուղղվող ռեսուրսները, կամ ՊՄ կոմունալ ծախսերը և այլն, ապա այս դեպքում պետք է ուսումնասիրել ՊՄ բյուջեի կառուցվածքն ըստ տնտեսագիտական հոդվածների (առավել մանրամասն տե՛ս հաջորդ բաժիններում):

Ինչպե՞ս վերլուծել տնտեսագիտական ծախսերը

- **Տնտեսագիտական** դասակարգումը ծախսերի խմբավորումն է դրանց տնտեսական բովանդակությանը համապատասխան:
- Այս դասակարգմամբ ծախսերը բաշխվում են ըստ 2 հիմնական կատեգորիաների՝ ընթացիկ ծախսեր և կապիտալ ծախսեր (ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր): Սրանք էլ իրենց հերթին բացվում են ըստ առանձին ուղղությունների (պատկեր 19): Տնտեսագիտական դասակարգման ամբողջական կառուցվածքը ներկայացված է Հավելված 3-ում:
- Ելնելով հետազոտության նպատակներից՝ տնտեսագիտական դասակարգումը կարելի է կիրառել և՛ պետական բյուջեի ընդամենը ծախսերի բնույթը, և՛ առանձին գերատեսչությունների ծախսերի կառուցվածքը, և՛ բյուջետային

Պատկեր 19. Բյուջետային ծախսերի բովանդակությունը ըստ տնտեսագիտական դասակարգման

Ընթացիկ ծախսեր	Կապիտալ ծախսեր
•Աշխատանքի վարձատրություն •Ծառայությունների և ապրանքների ձեռքբերում •Տոկոսավճարներ •Սուբսիդիաներ •Դրամաշնորհներ •Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ •Այլ ծախսեր	•Շենքեր և շինություններ •Մեքենաների և սարքավորումների ձեռքբերում, պահպանում և հիմնանորոգում •Այլ հիմնական միջոցներ •Չարտադրված ակտիվներ (հող)

առանձին ծրագրերի կամ միջոցառումների շրջանակներում իրականացվող ծախսային միջամտությունների տեսակները և կազմակերպման տարբեր այլ-ընտրանքները ներկայացնելու համար (տե՛ս [1], 12 էջ):

- Բյուջեի ընդամենը ծախսերի դեպքում կարևոր է ներկայացնել կապիտալ և ընթացիկ ծախսերի հարաբերակցությունը: Ընդ որում, վերլուծության օբյեկտ կարող են հանդիսանալ նաև միայն ներքին ռեսուրսների հաշվին կատարվող կապիտալ ծախսերը (առանց արտաքին օժանդակության):
- Պետք է հիշել, որ համաձայն «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքով սահմանված հարկաբյուջետային կանոնների, երբ կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը գերազան-ցում է 40 տոկոսը, ապա կապիտալ ծախսերը չպետք է փոքր լինեն պետական բյուջեի պակասուրդից: *Օրինակ, 2021 թվականին կառավարության պարտքը գերա-զանցել է ՀՆԱ-ի 60 տոկոսը՝ կազելով 60.3 տոկոս: Ըստ այդմ, 2022 թվականին պլանավորված կապիտալ ծախսերը կազմել են 351.9 մլրդ դրամ (որից 221.6 մլրդ դրամը միայն բյուջետային ռեսուրսների հաշվին), իսկ պակասուրդը՝ 236.6 մլրդ դրամ:*
- Ե՛վ ընթացիկ, և՛ կապիտալ ծախսերի կառուցվածում, ելնելով վերլուծության նպատակից, կարող է ուսումնասիրվել և ներկայացվել ծախսային բաղադրիչներից յուրա-քանչյուրն առանձին-առանձին:
- Օրինակ, վարչական/պահպանման ծախսերի դեպքում կարող է հետաքրքրել տվյալ մարմնի աշխատավարձի ֆոնդը, կապիտալ ծախսերի դեպքում՝ ձեռք բերվող մեքենաների կամ որևէ այլ սարքավորման ֆինանսավորման մակարդակը, պետական մարմնի հիմնանորոգմանն ուղղվող ֆինան-սական ռեսուրսները և այլն:
- Պետական բյուջեի ընթացիկ ծախսերի կարևորագույն բաղա-դրիչներից են սուբսիդիաները և դրամաշնորհները:

Սուբսիդիա *- այն գումարներն են, որոնք պետական բյուջեից անհատույց և անվերադարձ կերպով հատկացվում են պետական ու ոչ պետական ձեռնարկություններին և կազմակերպություններին իրենց ընթացիկ գործունեության արդյունքում առաջացած վնասները ծածկելու կամ գործունեությունը խթանելու համար: Սուբսիդիաները սկզբունքորեն հատկացվում են տվյալ ապրանքների կամ ծառայության շուկայական գնի (կամ ինքնարժեքի) և փաստացի գնի տարբերությունը ծածկելու համար:*

Դոտացիա *- պետական բյուջեից համայնքների բյուջեներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրվող տրանսֆերտներ են: Դրանք ոչ նպատակային հատկացումներ են, որոնք ուղղվում են համայքի բյուջեի վարչական մասում արտացոլվող ընթացիկ ծախսերի ֆինանսավորմանը:*

Սուբվենցիա *- համայնքի կողմից իրականացվող առանձին նպատակային ծախսատեսակի (ծրագրի) կատարման համար անհատույց և անվերադարձ կարգով տրվող դրամական միջոցներն են:*

- Վերջիններիս վերլուծությունը թույլ է տալիս հասկանալ պետական բյուջեից համայնքներին, պետական և ոչ պետական կազմակերպություններին, անհատներին, նաև՝ միջազգային գործընկերներին տրամադրվող անհատույց և անվերադարձ դրամական աջակցությունը:
- Համայնքներին տրամադրվող դրամաշնորհները կարող են լինել դոտացիաների և սուբվենցիաների տեսքով (տե՛ս [8], 17-20 էջեր):

Ինչպե՞ս վերլուծել ծրագրային ծախսերը

- Ծրագրային բյուջետավորումը ապահովում է փոխկապակցվածությունը բյուջետային ծախսերի և քաղաքականության նպատակների շուրջ ձևավորված ծրագրերի արդյունքների միջև:
- Ծրագրային բյուջետավորման թիրախում այն նպատակները և արդյունքներն են, որոնց իրականացմանը պետք է հետամուտ լինել առանձին ոլորտներում: Այսինքն՝ ծրագրային բյուջեն փոխկապակցում է բյուջետային ծախսերը քաղաքականության նպատակների և արդյունքների հետ:
- Ծրագրային բյուջետավորումը հնարավորություն է տալիս քաղաքականությունների նպատակները կապել ֆինանսական ռեսուրսների հետ, վերահսկել ֆինանսական ռեսուրսների ծախսման արդյունքում ձեռք բերվող արդյունքները:
- Ծրագրային դասակարգմամբ պետական բյուջեն ներկայացվում է ըստ քաղաքականությունների նպատակների իրականացմանն ուղղված ծրագրերի:
- Բյուջետային ծրագիրը որևէ կոնկրետ նպատակի իրագործմանն ուղղված պետության միջամտությունների/միջոցառումների տրամաբանական ամբողջությունն է:
- Յուրաքանչյուր ծրագրի տրամաբանական շրջանակի կարևոր բաղկացուցիչները հիմնական արդյունքային չափորոշիչներն են: Դրանք նաև ծրագրի մշտադիտարկման և գնահատման կարևորագույն գործիքներն են:
- Արդյունքային չափորոշիչները երկմակարդակ են. դրանք սահմանվում են թե՛ ծրագրի, և թե՛ միջոցառումների մակարդակում:
- Բյուջետային ծրագրի մակարդակում սահմանվում են վերջնական արդյունքի չափորոշիչները: Դրանք ծրագրերի նպատակների չափման, կատարողականի և արդյունավետության գնահատման հիմնական գործիքներն են, հնարավորություն են տալիս հետևել, թե արդյոք իրագործվում է ծրագրի նպատակը և որքանով է այն իրագործվում:
- Բյուջետային միջոցառման մակարդակում սահմանվում են ուղղակի արդյունքի չափորոշիչները: Վերջիններս անմիջականորեն նկարագրում են միջոցառումը և գնահատում դրա իրականացումը: Ուղղակի արդյունքի չափորոշիչները կարող են արտահայտել իրականացվող միջոցառման քանակը, որակը, ժամկետը, վայրը, ծածկույթը և այլն:

- *Ստորև պատկերը ներկայացնում է ՀՀ ԱՍՀՆ «Ժողովրդագրական վիճակի բարելավում» բյուջետային ծրագրի կառուցվածքը և տրամաբանական շրջանակը:*
- *Նկատենք, որ Ծրագիրը ներառում է թվով 5 բյուջետային միջոցառումներ, որոնք ուղղված են սահմանված ծրագրային նպատակի իրագործմանը, այն է՝* ***խթանել ժողովրդագրական իրավիճակը:***

Պատկեր 20. «Ժողովրդագրական վիճակի բարելավում» բյուջետային ծրագրի կառուցվածքը

Ծրագրի անվանումը՝ Ժողովրդագրական վիճակի բարելավում
Ծրագրի նպատակը՝ **Խթանել ժողովրդագրական վիճակի բարելավումը**
Վերջնական արդյունքի նկարագրությունը՝ **Ժողովրդագրական վիճակի բարելավում և բազմազավակության աճ**
Վերջնական արդյունքի չափորոշիչները՝
• **Նոր ծնված 1-ին երեխաների քանակը** • **Ծնելիության գումարային գործակիցը** • **Ընտանիքում 3 անչափահաս երեխա ունեցող խնամքի նպաստ ստանալու իրավունք ունեցողների թվաքանակը**

Միջոցառում	***Ուղղակի արդյունքի չափորոշիչները՝***
Մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստի տրամադրման ապահովում	Մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստ ստացող քաղաքացիների թիվ
Մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստի տրամադրում	Մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստ ստացող քաղաքացիների թիվ
Երեխայի ծննդյան միանվագ նպաստ	Շահառու նորածինների թիվ, ադ թվում՝ • ընտանիքում առաջին և երկրորդ երեխաների թիվ • ընտանիքում երրորդ և չորրորդ երեխաների թիվ • ընտանիքում հինգ և հաջորդ երեխաների թիվ
Երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահովման աջակցություն	Շահառու ընտանիքների թվաքանակ՝ • բազմազավակ ընտանիքների նպաստի բաղադրիչ • մարզային բնակավայրերում բնակարան ձեռք բերելու համար միանվագ դրամական աջակցության բաղադրիչ • երիտասարդ ընտանիքների համար կանխավճարի ապահովագրության բաղադրիչ • երեխայի ծննդով պայմանավորված՝ հիփոթեքային վարկ մարող ընտանիքներին դրամական աջակցության բաղադրիչ
Դրամական աջակցություն ընտանիքում 3 և ավելի երեխա ունեցող ընտանիքներին	Շահառու ընտանիքների թվաքանակ

- Բյուջետային ծրագրերը վերլուծելիս, պետք է կենտրոնանալ ինչպես ծախսվող ֆինանսական ռեսուրսների և դրանց արդյունավետության վրա, այնպես էլ քննարկել ծրագրի նպատակի և թիրախավորված վերջնական արդյունքների ձեռք բերման մակարդակները:
- Ծրագրերի միջոցառումները վերլուծելիս պետք է կարևորել և քննարկել հատկացվող ֆինանսավորման ծավալների և ուղղակի արդյունքի ցուցանիշների կապը, դրանց ձեռքբերման մակարդակները, միավոր արդյունքի վրա կատարվող ծախսերը և դրանց փոփոխությունները, շահառուներին մատուցվող ծառայությունների ծավալը և դրա փոփոխությունները և այլն:
- Ընդհանուր առմամբ ծրագրային բյուջեն վերլուծելիս կարևոր կարող են լինել հետևյալ հիմնական ուղղությունները (տե՛ս [6], 9-13 էջեր)՝
- Քաղաքականություն-բյուջե կապի վերլուծություն,
- Ծրագրի կառուցվածքի վերլուծություն,
- Ֆինանսական և ոչ ֆինանսական արդյունքային ցուցանիշների վերլուծություն,
- Արդյունավետության վերլուծություն,
- Բյուջեի կատարման վերլուծություն:

- **Մշտադիտարկումը** շարունակաբար իրականացվող գործառույթ է, որը որոշակի ցուցանիշների գծով տվյալների համակարգված հավաքագրման միջոցով ծրագրի կառավարիչներին և շահագրգիռ կողմերին տրամադրում է տեղեկություններ ծրագրի իրականացման առաջընթացի և արդյունքների ձեռքբերման, ինչպես նաև ռեսուրսների օգտագործման աստիճանի վերաբերյալ[9]:
- Բյուջետային ծրագրերի մշտադիտարկման հիմնական գործիքը ծրագրի հիմնական արդյունքային չափորոշիչների համակարգն է:
- Բյուջետային ծրագրերի մշտադիտարկման նպատակով քաղաքացիական հասարակությունը տարբեր գործիքներ և մեթոդներ է կիրառում: Ստորև ներկայացնում ենք դրանցից առավել տարածվածները:
- **Սոցիալական աուդիտ.** ստուգում է, թե ինչպես են բյուջետային ծրագրերն իրականացվում՝ նպատակ ունենալով ծրագրերի բարելավումների և համապատասխանեցման սոցիալական և բնապահպանական քաղաքականությունների նպատակներին:
- Բյուջետային ծրագրի կամ հանրային ծառայության բարելավման հիմնական գործիքը դա շահառուների և օգտատերերի հետադարձ կապի համակարգված գնահատումն է:
- Այն նախատեսված է օգնել օգտատերերին հասկանալու և գնահատելու ծրագրի կամ հանրային ծառայության ուժեղ և թույլ կողմերը, հաջողություններն ու ձախողումները:
- Սոցիալական աուդիտը հասարակության մասնակցությունը մեծացնելու, կառավարության և ծառայություններ մատուցողների հետ կապերի ամրապնդման, թափանցիկության և հանրային հաշվետվողականության խթանման, բոլոր օգտատերերի պատասխանատվության բարձրացման միջոց է:
- Սոցիալական աուդիտները կարող են տարբեր ձևեր ընդունել և ընդգրկել մի շարք դերակատարներ և պրակտիկա: Սակայն դրանք ամենից հաճախ սկսվում են որպես քաղաքացիական հասարակության նախաձեռնություններ և երբեմն վերածվում են համագործակցային և ինստիտուցիոնալ ջանքերի:
- Սոցիալական աուդիտը բազմակողմանի գործիք է և ընդգրկման շրջանակը կարող է հարմարեցվել առկա ռեսուրսներին: Դրանք կարող են տատանվել համապարփակ ազգային մակարդակի վերլուծություններից մինչև

[9] OECD/DAC definition ofmonitoring

տեղական համայնքային աուդիտներ:

- Սոցիալական աուդիտի իրականացման մոտեցումները, մեթոդները և գործիքակազմը ևս լայն են: Այդպիսի գործիքներից են գնահատման քարտերը, ծառայությունների մատուցման գնահատումները և այլն:
- Սոցիալական աուդիտի նախաձեռնությունների մեծ մասը կազմակերպվում է ի պատասխան տեղական մակարդակում սոցիալական ծառայությունների վատ և/կամ անբավարար մատուցման:
- Սոցիալական աուդիտները կարող են օգնել բարձրացնել հանրային իրազեկվածությունը և գիտելիքները բյուջեի հետ կապված խնդիրների վերաբերյալ: Նրանք նաև լիազորում են քաղաքացիներին՝ թույլ տալով նրանց տրամադրել հետադարձ կապ, հավաքել ապացույցներ, մեկնաբանել բացահայտումները և լուծումներ մշակել:
- Այս գործիքը կարող է նաև նպաստել թափանցիկության բարձրացմանը՝ ձևավորելով տեղեկատվության նկատմամբ պահանջարկ:
- Քաղաքականություն մշակողները ևս կարող են օգտվել սոցիալական աուդիտի իրականացումից՝ տիրապետելով քաղաքացիների մտահոգությունների վերաբերյալ տեղեկա-վության և բարելավելով տարբեր հարցերի շուրջ իրենց ընկալումը:
- Երբեմն սոցիալական աուդիտները ինստիտուցիոնալացվում են և կանոնավոր մոնիտորինգ են իրականացնում պետական հաստատություններում՝ դրանով իսկ նպաստելով պետական դերակատարների նկատմամբ վստահելիության և դերի բարձրացմանը:
- **Պետական ծախսերի հսկողություն (Public expenditure tracking).** ներառում է հանրային ապրանքների կամ ծառայությունների մատուցման համար պետական ռեսուրսների ծախսերի հսկողություն՝ սկզբից մինչև վերջնական արդյունքներ: Այն կարող է օգնել բացահայտելու խոչընդոտները, անարդյունավետությունը և/կամ կոռուպցիոն ռիսկերը հանրային բարիքների և ռեսուրսների արտադրության և բաշխման գործընթացներում:
- Պետական ծախսերի հսկողությունը կոռուպցիայից պաշտպանվելու և հանրային ֆինանսների թափանցիկ, հաշվետու և արդյունավետ կառավարումն ապահովելու հիմնական գործիքներից է: Այն թույլ է տալիս քաղաքացիներին և ՔՀԿ-ներին հետևել ռեսուրսների հոսքին կառավարման տարբեր մակարդակներով դեպի վերջնական օգտագործողներ և բացահայտել արտահոսքերը:
- **Պետական ծախսերի հետագծման հետազոտությունը (PETS).** քանակական հետազոտություն է, որը հետևում է պետական միջոցների ծախսման

ընթացքին՝ որոշելու, թե իրականում որքանով են ռեսուրսները հասնում թիրախային խմբերին: Ծառայությունների մատուցման վերաբերյալ սպառողների ընկալման որակական հետազոտությունների հետ մեկտեղ դրանք կարող են շատ ազդեցիկ լինել:

- **Բյուջեի անկախ վերլուծությունը (Independent budget analysis)** վերաբերում է ՔՀԿ-ների ջանքերին՝ վերլուծելու առաջարկվող պետական բյուջեները և կիսելու իրենց եզրակացություններն ու մտահոգությունները կառավարության և լայն հանրության հետ՝ բյուջետային փոփոխությունները պաշտպանելու նպատակով: Բյուջեի անկախ վերլուծությունը բարձրացնում է հանրային իրազեկվածությունը բյուջեի հիմնական խնդիրների վերաբերյալ և կարող է հանգեցնել բյուջետային ռեսուրսների վերաբաշխման՝ ավելի լավ արտացոլելու համար հանրային առաջնահերթությունները և մտահոգությունները:
- Բյուջեի անկախ վերլուծությունը քաղաքացիական հասարակության և այլ անկախ կազմակերպությունների կողմից իրականացվող վերլուծական և շահերի պաշտպանության աշխատանքներն են, որոնք ուղղված են պետական բյուջեները թափանցիկ դարձնելուն և պետական միջոցների բաշխման վրա ազդելուն:
- Բյուջեի անկախ վերլուծության նպատակներն են.
  - Բարելավել տեղեկատվության փոխանակումը և բյուջեի վերաբերյալ հանրային ընկա-ումը:
  - Ազդել բյուջետային հատկացումների վրա. Այս գործիքն օգնում է քաղաքացիներին՝ իրազեկել բյուջետային հատկացումների ազդեցության մասին և մոբիլիզացնել հանրային կարծիքը՝ հասնելու բյուջետային հատկացումների բաշխման ավելի մեծ արդարության:
  - Բարելավել ֆինանսական միջոցների թիրախավորումը խոցելի խմբերի համար, այդ թվում՝ կանանց և երեխաների: Բյուջեի անկախ վերլուծությունը կարող է օգնել խոցելի խմբերի հզորացմանը՝ բարձրաձայնելով նրանց մտահոգությունները:
  - Նախաձեռնել քննարկումներ բյուջեի ոլորտային հատկացումների վերաբերյալ:
  - Ազդել եկամուտների քաղաքականության վրա[10]:
- **Բյուջետային ծրագրերի անկախ գնահատում.** ՔՀԿ-ների կողմից բյուջետային առանձին ծրագրերի կամ միջոցառումների իրականացման գնահատում:

[10] Roberto Martinez B. Kukutschka "Civil society budget Monitoring", Transparency Internationa, 2016

- Գնահատումը սահմանվում է որպես՝ ընթացող կամ ավարտված միջոցառման կամ ծրագրի կարևորության, իրականացման գործընթացի, արդյունքների և ազդեցության համակարգային, համակողմանի ուսումնասիրություն:
- Այն ուղղված է որոշելու համապատասխանությունը և նպատակների իրագործման աստիճանը, իրականացման արդյունավետությունը, ազդեցությունը և արդյունքների կայունությունը:
- Գնահատումը պետք է ապահովի վստահելի և օգտակար տեղեկատվություն, ինչպես նաև հնարավորություն տա դասեր քաղել և բարելավել որոշումները[11]: Գնահատման արդյունքների կիրառումը որոշումների կայացման գործընթացում կարող է իրականացվել սկսած ծրագրի տրամաբանական կառուցվածքի վերաձևավորումից, միջոցառումների համախմբի փոփոխություններից, մինչև ծրագրի բարելավում և շահառուների կարիքներին առավել համապատասխանեցում:
- Ծրագրերի գնահատման համար կիրառվում են տարբեր մոտեցումներ և մեթոդներ: OECD/DAC-ի կողմից առաջարկում են գնահատման 6 ստանդարտ չափանիշներ, որոնք ըստ էության հիմք են հանդիսանում գրեթե բոլոր ծրագրերի գնահատման համար: Այդ չափանիշներն են՝
  - Համապատասխանությունը,
  - Նպատակների հասանելիությունը,
  - Արդյունավետությունը,
  - Փոխլրացումը,
  - Ազդեցությունը,
  - Կայունությունը:

Համապատասխանություն

- Արդյոք ծրագրով նախատեսվող նպատակները համապատասխանում են շահառուների պահանջներին, երկրի կարիքներին և քաղաքականությունների գերակայություններին

Նպատակների հասանելիություն

- Վերաբերվում է ծրագրի արդյունքների և նպատակների հասանելիությանը

Արդյունավետություն

- Որքան արդյունավետ են ռեսուրսները փոխակերպվել սպասվող արդյունքների՝ քանակի, որակի և ժամկետների տեսանկյունից

Փոխլրացում

- Բացահայտել գնահատվող ծրագրի և այլ հարակից ծրագրերի և նախաձեռնությունների կապը և դրանց համատեղ ազդեցության բազմարկված ներուժը

Ազդեցություն

- Դրական և բացասական, առաջնային և երկրորդային, կարճաժամկետ և երկարաժամկետ, սպասվող և անսպասելի, ուղղակի և անուղղակի հնարավոր ազդեցությունների գնահատում

Կայունություն

- Կշարունակվեն արդյոք ծրագրի դրական արդյունքները

[11] OECD/DAC definition of evaluation, DAC Glossary,

- Ծրագրերը այս կամ այն չափանիշով գնահատման մեթոդները և գործիքակազմը տարբեր է, սակայն հիմնականում օգտագործվող գործիներն են՝
  - Փաստաթղթային ուսումնասիրություններ,
  - Դաշտային այցեր,
  - Հիմնական տեղեկացված անձանց հետ հարցազրույցներ,
  - Ֆոկուս խմբային քննարկումներ,
  - Շահառուների կարծիքի ուսումնասիրություններ,
  - Վիճակագրական-քանակական հետազոտություններ,
  - Փաստագրված տեղեկատվության քննություն,
  - Տվյալների բազաների ուսումնասիրություն, վերլուծություն և այլն:

ՀԱՎԵԼՎԱԾ 1. Պատասխանատու մարմիններ

- ՀՀ Նախագահի աշխատակազմ
- ՀՀ Ազգային ժողով
- ՀՀ վարչապետի աշխատակազմ
- ՀՀ սահմանադրական դատարան
- Բարձրագույն դատական խորհուրդ
- ՀՀ դատախազություն
- ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
- ՀՀ առողջապահության նախարարություն
- ՀՀ արդարադատության նախարարություն
- ՀՀ էկոնոմիկայի նախարարություն
- ՀՀ արտաքին գործերի նախարարություն
- ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն
- ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
- ՀՀ պաշտպանության նախարարություն
- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
- ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն
- ՀՀ ֆինանսների նախարարություն
- ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն
- ՀՀ վիճակագրական կոմիտե
- ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով
- ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով
- Մրցակցության պաշտպանության հանձնաժողով
- Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով
- ՀՀ պետական եկամուտների կոմիտե
- ՀՀ ազգային անվտանգության ծառայություն
- ՀՀ ոստիկանություն
- Հանրային հեռարձակողի խորհուրդ
- ՀՀ հաշվեքննիչ պալատ
- Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ
- ՀՀ միջուկային անվտանգության կարգավորման կոմիտե
- ՀՀ քննչական կոմիտե
- ՀՀ քաղաքաշինության կոմիտե
- Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով
- ՀՀ պետական վերահսկողական ծառայություն
- Հակակոռուպցիոն կոմիտե
- Արագածոտնի մարզպետարան
- Արարատի մարզպետարան
- Արմավիրի մարզպետարան
- Գեղարքունիքի մարզպետարան
- Լոռու մարզպետարան
- Կոտայքի մարզպետարան
- Շիրակի մարզպետարան
- Սյունիքի մարզպետարան
- Վայոց ձորի մարզպետարան
- Տավուշի մարզպետարան
- ՀՀ կառավարություն
- ՀՀ կադաստրի կոմիտե

ՀԱՎԵԼՎԱԾ 2. Գործառական դասակարգման կառուցվածքը[12]

ԲԱԺԻՆ	ԽՈՒՄԲ	ԴԱՍ	
01			**ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ**
	01		Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում, ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ, արտաքին հարաբերություններ
		01	Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում
		02	Ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ
		03	Արտաքին հարաբերություններ
	03		Ընդհանուր բնույթի ծառայություններ
		01	Աշխատակազմի (կադրերի) գծով ընդհանուր բնույթի ծառայություններ
		02	Ծրագրման և վիճակագրական ընդհանուր ծառայություններ
		03	Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ
	04		Ընդհանուր բնույթի հետազոտական աշխատանք
		01	Ընդհանուր բնույթի հետազոտական աշխատանք
	05		Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ
		01	Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ
	06		Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերի չպատկանող)
		01	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերի չպատկանող)
	07		Պետական պարտքի գծով գործառնություններ
		01	Պետական պարտքի գծով գործառնություններ
	08		Կառավարության տարբեր մակարդակների միջև իրականացվող ընդհանուր բնույթի տրանսֆերտներ
		01	Կառավարության տարբեր մակարդակների միջև իրականացվող ընդհանուր բնույթի տրանսֆերտներ
02			**ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ**
	01		Ռազմական պաշտպանություն
		01	Ռազմական պաշտպանություն
	03		Արտաքին ռազմական օգնություն
		01	Արտաքին ռազմական օգնություն
	04		Հետազոտական և նախագծային աշխատանքներ պաշտպանության ոլորտում
		01	Հետազոտական և նախագծային աշխատանքներ պաշտպանության ոլորտում
	05		Պաշտպանություն (այլ դասերի չպատկանող)
		01	Պաշտպանություն (այլ դասերի չպատկանող)

[12] Ըստ 2023 թվականի պետական բյուջեի մասին օրենքի:

03			**ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳ, ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ**
	01		Հասարակական կարգ և անվտանգություն
		01	Ոստիկանություն
		02	Ազգային անվտանգություն
		03	Պետական պահպանություն
	02		Փրկարար ծառայություն
		01	Փրկարար ծառայություն
	03		Դատական գործունեություն և իրավական պաշտպանություն
		01	Դատարաններ
		02	Իրավական պաշտպանություն
	04		Դատախազություն
		01	Դատախազություն
	05		Կալանավայրեր
		01	Կալանավայրեր
	07		Նախաքննություն
		01	Նախաքննություն
04			**ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**
	01		Ընդհանուր բնույթի տնտեսական, առևտրային և աշխատանքի գծով հարաբերություններ
		01	Ընդհանուր բնույթի տնտեսական և առևտրային հարաբերություններ
		02	Աշխատանքի հետ կապված ընդհանուր բնույթի հարաբերություններ
	02		Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ձկնորսություն և որսորդություն
		01	Գյուղատնտեսություն
		02	Անտառային տնտեսություն
		04	Ոռոգում
	03		Վառելիք և էներգետիկա
		03	Միջուկային վառելիք
		05	Էլեկտրաէներգիա
	04		Լեռնաարդյունահանում, արդյունաբերություն և շինարարություն
		01	Հանքային ռեսուրսների արդյունահանում, բացառությամբ բնական վառելիքի
		03	Շինարարություն
	05		Տրանսպորտ
		01	Ճանապարհային տրանսպորտ
		03	Երկաթուղային տրանսպորտ
		04	Օդային տրանսպորտ
		05	Խողովակաշարային և այլ տրանսպորտ

	06		Կապ
		01	Կապ
	07		Այլ բնագավառներ
		03	Զբոսաշրջություն
	08		Տնտեսական հարաբերությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ
		01	Ընդհանուր բնույթի տնտեսական, առևտրային և աշխատանքի հարցերի գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ
	09		Տնտեսական հարաբերություններ (այլ դասերի չպատկանող)
		01	Տնտեսական հարաբերություններ (այլ դասերի չպատկանող)
05			**ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ**
	01		Աղբահանում
		01	Աղբահանում
	04		Կենսաբազմազանության և բնության պաշտպանություն
		01	Կենսաբազմազանության և բնության պաշտպանություն
	06		Շրջակա միջավայրի պաշտպանություն (այլ դասերի չպատկանող)
		01	Շրջակա միջավայրի պաշտպանություն (այլ դասերի չպատկանող)
06			**ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ**
	01		Բնակարանային շինարարություն
		01	Բնակարանային շինարարություն
	02		Համայնքային զարգացում
		01	Համայնքային զարգացում
	03		Ջրամատակարարում
		01	Ջրամատակարարում
	04		Փողոցների լուսավորում
		01	Փողոցների լուսավորում
	06		Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ (այլ դասերի չպատկանող)
		01	Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ (այլ դասերի չպատկանող)
07			**ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ**
	01		Բժշկական ապրանքներ, սարքեր և սարքավորումներ
		01	Դեղագործական ապրանքներ
		03	Բժշկական սարքեր և սարքավորումներ
	02		Արտահիվանդանոցային ծառայություններ
		01	Ընդհանուր բնույթի բժշկական ծառայություններ
		02	Մասնագիտացված բժշկական ծառայություններ
		03	Ստոմատոլոգիական ծառայություններ

		04	Պարաբժշկական ծառայություններ
	03		Հիվանդանոցային ծառայություններ
		01	Ընդհանուր բնույթի հիվանդանոցային ծառայություններ
		02	Մասնագիտացված հիվանդանոցային ծառայություններ
		03	Մոր և մանկան բժշկական ծառայություններ
	04		Հանրային առողջապահական ծառայություններ
		01	Հանրային առողջապահական ծառայություններ
	06		Առողջապահություն (այլ դասերի չպատկանող)
		01	Առողջապահական հարակից ծառայություններ և ծրագրեր
		02	Առողջապահություն (այլ դասերի չպատկանող)
08			**ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ**
	01		Հանգստի և սպորտի ծառայություններ
		01	Հանգստի և սպորտի ծառայություններ
	02		Մշակութային ծառայություններ
		01	Գրադարաններ
		02	Թանգարաններ և ցուցասրահներ
		03	Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ
		04	Այլ մշակութային կազմակերպություններ
		05	Արվեստ
		06	Կինեմատոգրաֆիա
		07	Հուշարձանների և մշակութային արժեքների վերականգնում և պահպանում
	03		Ռադիո և հեռուստահաղորդումների հեռարձակման և հրատարակչական ծառայություններ
		01	Հեռուստառադիոհաղորդումներ
		02	Հրատարակչություններ, խմբագրություններ
		03	Տեղեկատվության ձեռքբերում
	04		Կրոնական և հասարակական այլ ծառայություններ
		01	Երիտասարդական ծրագրեր
		02	Քաղաքական կուսակցություններ, հասարակական կազմակերպություններ,արհմիություններ
09			**ԿՐԹՈՒԹՅՈՒՆ**
	01		Նախադպրոցական և տարրական ընդհանուր կրթություն
		01	Նախադպրոցական կրթություն
		02	Տարրական ընդհանուր կրթություն
	02		Միջնակարգ ընդհանուր կրթություն
		01	Հիմնական ընդհանուր կրթություն
		02	Միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթություն

	03		Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն
		01	Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն
		02	Միջին մասնագիտական կրթություն
	04		Բարձրագույն կրթություն
		01	Բարձրագույն մասնագիտական կրթություն
		02	Հետբուհական մասնագիտական կրթություն
	05		Ըստ մակարդակների չդասակարգվող կրթություն
		01	Արտադպրոցական դաստիարակություն
		02	Լրացուցիչ կրթություն
	06		Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ
		01	Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ
	08		Կրթություն (այլ դասերի չպատկանող)
		01	Կրթություն (այլ դասերի չպատկանող)
10			**ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ**
	01		Վատառողջություն և անաշխատունակություն
		01	Վատառողջություն
		02	Անաշխատունակություն
	02		Ծերություն
		01	Ծերություն
	03		Հարազատին կորցրած անձինք
		01	Հարազատին կորցրած անձինք
	04		Ընտանիքի անդամներ և զավակներ
		01	Ընտանիքի անդամներ և զավակներ
	05		Գործազրկություն
		01	Գործազրկություն
	06		Բնակարանային ապահովում
		01	Բնակարանային ապահովում
	07		Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերի չպատկանող)
		01	Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերի չպատկանող)
	09		Սոցիալական պաշտպանություն (այլ դասերի չպատկանող)
		01	Սոցիալական պաշտպանություն (այլ դասերի չպատկանող)
		02	Սոցիալական պաշտպանությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ (այլ դասերի չպատկանող)
11			**ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ**
	01		ՀՀ կառավարության և համայնքների պահուստային ֆոնդ
		01	ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ

ՀԱՎԵԼՎԱԾ 3. Տնտեսագիտական դասակարգման կառուցվածքը

Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները
ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ
Դրամով վճարվող աշխատավարձեր և հավելավճարներ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ
Շարունակական ծախսեր
Ծառայողական գործուղումների գծով ծախսեր
Պայմանագրային այլ ծառայությունների ձեռքբերում
Այլ մասնագիտական ծառայությունների ձեռքբերում
Ընթացիկ նորոգում և պահպանում (ծառայություններ և նյութեր)
Նյութեր
ՏՈԿՈՍԱՎՃԱՐՆԵՐ
Ներքին տոկոսավճարներ
Արտաքին տոկոսավճարներ
ՍՈՒԲՍԻԴԻԱՆԵՐ
Սուբսիդիաներ պետական կազմակերպություններին
Սուբսիդիաներ ոչ պետական կազմակերպություններին
ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ
Դրամաշնորհներ միջազգային կազմակերպություններին
- Ընթացիկ դրամաշնորհներ միջազգային կազմակերպություններին
Ընթացիկ դրամաշնորհներ պետական հատվածի այլ մակարդակներին
- Ընթացիկ սուբվենցիաներ համայնքներին
- Պետական բյուջեից համայնքների բյուջեներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիաներ
- Օրենքների կիրարկման արդյունքում համայնքների բյուջեների կորուստների փոխհատուցում
- Այլ ընթացիկ դրամաշնորհներ համայնքներին
- Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին
- Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային առևտրային կազմակերպություններին
- Այլ ընթացիկ դրամաշնորհներ
Կապիտալ դրամաշնորհներ պետական հատվածի այլ մակարդակներին
- Կապիտալ սուբվենցիաներ համայնքներին
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐ ԵՎ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ
Սոցիալական ապահովության նպաստներ
Սոցիալական օգնության դրամական արտահայտությամբ նպաստներ (բյուջեից)

- Հիվանդության և հաշմանդամության նպաստներ բյուջեից
- Մայրության նպաստներ բյուջեից
- Երեխաների կամ ընտանեկան նպաստներ բյուջեից
- Կենսաթոշակի անցնելու հետ կապված և տարիքային նպաստներ բյուջեից
- Հուղարկավորության նպաստներ բյուջեից
- Կրթական, մշակութային և սպորտային նպաստներ բյուջեից
- Բնակարանային նպաստներ բյուջեից
- Այլ նպաստներ բյուջեից
Կենսաթոշակներ
- Կենսաթոշակներ
ԱՅԼ ԾԱԽՍԵՐ
Նվիրատվություններ ոչ կառավարչական (հասարակական) կազմակերպություններին
Հարկեր, պարտադիր վճարներ և տույժեր, որոնք կառավարման տարբեր մակարդակների կողմից կիրառվում են միմյանց նկատմամբ
Դատարանների կողմից նշանակված տույժեր և տուգանքներ
Կառավարման մարմինների գործունեության հետևանքով առաջացած վնասվածքների կամ վնասների վերականգնում
Այլ ծախսեր
Պահուստային միջոցներ
ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՀԵՏ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ
ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ
ՇԵՆՔԵՐ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
- Շենքերի և շինությունների ձեռքբերում
- Շենքերի և շինությունների շինարարություն
- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում
ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ, ՊԱՀՊԱՆՈՒՄ ԵՎ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՈՒՄ
- Տրանսպորտային սարքավորումներ
- Վարչական սարքավորումներ
- Այլ մեքենաներ և սարքավորումներ
ԱՅԼ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ
- Աճեցվող ակտիվներ
- Ոչ նյութական հիմնական միջոցներ
- Գեոդեզիական-քարտեզագրական ծախսեր
- Նախագծահետազոտական ծախսեր
ՉԱՐՏԱԴՐՎԱԾ ԱԿՏԻՎՆԵՐ
ՀՈՂ

ՀԱՎԵԼՎԱԾ 4. Օգտակար հրապարակումներ

1. ԳՀՄՀ, ՀՀ ՖՆ, ՏՀՀԿ «Քաղաքացու բյուջե 2020. ներառականություն և կայուն աճի հիմքեր»
2. ԵՄ, ՏՀՀԿ «Սոցիալական պաշտպանության պարզեցված բյուջե 2016»
3. ԵՄ, ՏՀՀԿ «Առողջապահության պարզեցված բյուջե 2016»
4. ԵՄ, ՏՀՀԿ «Գյուղատնտեսության պարզեցված բյուջե 2016»
5. ԵՄ, ՏՀՀԿ «Բյուջետային քաղաքականությունների ամփոփագիր. Լոռու մարզ», 2021
6. ԵՄ, ՏՀՀԿ «Բյուջետային քաղաքականությունների ամփոփագիր. Շիրակի մարզ», 2021
7. ԵՄ, ՏՀՀԿ «Բյուջետային քաղաքականությունների ամփոփագիր. Տավուշի մարզ», 2021
8. ԵՄ, ՏՀՀԿ «Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ բյուջետային ծրագրի գնահատում», 2016

Տնտեսական զարգացման և
հետազոտությունների կենտրոն (EDRC)
+374(0) 55 540 289
info@edrc.am
www.edrc.am